Azg
armenian daily

27 ՅՈՒԼԻՍ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 138 (2106)

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու դիմում Մեծ Բրիտանիայի վարչապետին

ԼՈՆԴՈՆ, 26 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔ: Մեծ Բրիտանիայի խորհրդարանի երկու պալատների մի խումբ խորհրդարանականներ դիմել են վարչապետ Թոնի Բլերին 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում Հայերի ցեղասպանությունը ճանաչելու խնդրանքով: Մեծ Բրիտանիայի խորհրդարանի պատմության մեջ դա առաջին դիմումն է երկրի վարչապետին եւ խորհրդարանին՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի: Բացի 75 խորհրդարանականներից խնդրագիրը ստորագրել են նաեւ Բրիտանիայի հազարավոր քաղաքացիներ, որոնց թվում նաեւ դերասաններ, պատմաբաններ, գիտնականներ, բանկիրներ եւ գործարարներ: Որպես խնդրագրի նախաձեռնող հանդես է եկել Հայ-Բրիտանական ընդհանուր կուսակցական խորհրդարանական խումբը, որը ստեղծվել է 1992 թվականին Օդես Բազիլի եւ Արմեն Սարգսյանի նախաձեռնությամբ: Տվյալ խումբը, որի կազմում բացի բազմաթիվ շարքային բրիտանացիներից ընդգրկված են նաեւ Մեծ Բրիտանիայի օրենսդրական մարմնի Համայնքների պալատի 31 անդամներ եւ Լորդերի պալատի 27 անդամներ, իր թվակազմով նախկին ԽՍՀՄ-ի տարածքում միջխորհրդարանական խմբերից խոշորագույնն է եւ հայ-բրիտանական մշակութային ու տնտեսական կապերի ամրապնդման եւ զարգացման նպատակ է հետապնդում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Անգամ ընդդիմությունը մեղմում է իր սկզբունքայնությունը՝ Հայաստանի արտաքին պարտքին ի տես

Բաշխիչ ցանցերի մասնավորեցման օրենքի նախագիծն ընդունվեց առաջին ընթերցումով

ԱՆՈՒՇ ԴՈՎԼԱԹՅԱՆ

Երեկ էներգետիկ բաշխիչ ցանցերի մասնավորեցման վերաբերյալ իրենց ամփոփիչ տեսակետներն արտահայտեցին խորհրդարանական խումբ-խմբակցությունները: Անդրանիկ ելույթն «Օրինաց երկրի» ներկայացուցիչ Արթուր Բաղդասարյանինն էր: Առաջարկությունների երկար շարքը, որ նա շարադրեց օրենքի նախագծում լրացումներ ու փոփոխություններ կատարելու անհրաժեշտ պնդումով, ի վերջո հանգեցվեց հետեւյալ պայմանին. «Օրինաց երկիրը» նախագծին կողմ կքվեարկի միայն իր պահանջները հաշվի առնելու դեպքում: Այդ պահանջները, սակայն, իրավիճակը նկատի ունենալով, բավականաչափ «առասպելական» էին, որպեսզի դրանց ընդունումը հնարավոր լիներ. պարզ մի օրինակ՝ խմբակցությունը պահանջում էր նախագծում ամրագրել, որ առաջիկա 10 տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի սակագինը չի բարձրանալու: Այսպիսով, «Օրինաց երկիրն» ի սկզբանե ընդդիմության դիրքերում էր:

Երկրորդ ելույթը Շավարշ Քոչարյանինն էր՝ ԱԺՄ-ից: Քանի որ ֆնարկումների սկզբից ետեւ ԱԺՄ-ականների շարքերում հետաքրքիր իրավիճակ էր ստեղծվել շնորհիվ անգիջում Արշակ Սադոյանի, նրա՝ ավելի գիջողաբար տրամադրված ընկերները գտան ելքը. «ԱԺՄ անդամներն ազատ են իրենց տեսակետում, յուրաքանչյուրը թող քվեարկի ինչպես հարմար է գտնում», ասաց Շավարշ Քոչարյանը: Սակայն մինչ այդ հնչած Սեյրան Ավագյանի եւ Ֆիլարետ Բերիկյանի ելույթներում արդեն իսկ ուրվագծվում էր ոչ ընդդիմադիր դիրքորոշումը, այնպես որ ԱԺՄ «ան»դիրքորոշման մասին կարելի է պարզորոշ ենթադրել:

Ընդդիմության դիրքերին մինչեւ վերջ հավատարիմ մնաց «Իրավունք եւ միաբանությունը», որի պատվիրակի դերում Արտաշես Գեղամյանն էր: Նա կծու հումորով արձանագրեց, որ ներկայացված օրենքի նախագիծն իր դրական կողմն էլ ունի, քանզի այս փաստաթղթում մեր կառավարությունը վերջապես եւ լիակատար անկեղծությամբ խոստովանում է, թե անկարող է հոգալու սեփական էներգահամակարգի ծախսերը եւ ղեկավարելու: «Իրավունք եւ միաբանությունը» սեփականաշնորհման հարցում ի սկզբանե քաղաքական ենթատեքստ էր տեսնում եւ դժգոհում հատկապես գնորդի ընտրությունից (նրանց համոզմամբ՝ առաջնությունը, ՀԲ-ի շնորհիվ, տրվելու է ամերիկյան գնորդին): Արտաշես Գեղամյանի ելույթում ռուսամետության հնչեղանքներ լսվեցին, ըստ որոշ աղբյուրների՝ այս խմբակցությունը ջատագովն է եղել, որպեսզի «Իտեռան» գնորդ հանդիսանա:

Տես էջ 2

1700-ԱՄՅԱԿ

Եկեղեցիները՝ եկեղեցուն

Որոշեց ՀՀ կառավարությունը

Պարզվում է, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցու գլխավոր վանքերն ու եկեղեցիները պատկանում էին ոչ թե եկեղեցուն, այլ պետության սեփականությունն էին՝ համարվելով պատմության ու մշակույթի հուշարձան: Որպեսզի ուղղվի այդ անարդարությունը, Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունել դրանք անհատույց, սեփականության իրավունքով հանձնել հայ եկեղեցուն, մեզ հայտնեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Այս որոշումը կապված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առաջիկա տոնակատարության հետ:



Եկեղեցուն են վերադարձվել Մայր աթոռ Սբ. Էջմիածնի Մայր տաճարը (Սբ. Էջմիածնի վանքը), Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե եւ Սբ. Գայանե վանքերը, Սբ. Աստվածածին եւ Սբ. Հոռոմակաթ եկեղեցիները, Երեւանի Սբ. Սարգիս առաջնորդանիստ, Սբ. Հովհաննես, Սբ. Զորավար, Սբ. Կաթողիկե, Քանաքեռի Սբ. Հակոբ, Նորագավթի Սբ. Գեւորգ եկեղեցիները: Էջմիածնին են հանձնվել նաեւ Սբ. Գեղարդ, Խոր Վիրապ, Սեւանի վանքերը եւ Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:

Կառավարությունը մշակույթի նախարարությանն է հանձնարարել եկեղեցու հետ կնքել պայմանագիր նշված շենքերի նվիրատվության մասին:

Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը եկեղեցուն անհատույց հանձնել է մի շարք շինություններ ու հողակտորներ: Ինչպես վկայում է կառավարության մամուլի ծառայությունում մեզ տրամադրած տեղեկանքը, դրանք են Մայրավանքին հարող այգու տարածքում գտնվող գիտական հետազոտությունների նախկին կենտրոնի կիսավեր շենքը, Մայրավանքին կից խանութի շենքը, ՀՀ գյուղնախարարության գիտահետազոտական ինստիտուտի՝ Սբ. Գայանե վանքին մերձակա մասնաշենքը: Բացի այդ, եկեղեցուն մշտական օգտագործման իրավունքով հանձնվել են նշված մասնաշենքին հարակից 0,6 հա, Սբ. Հռիփսիմե վանքին հարակից 2,5 հա հողատարածքները, Գեւորգյան ճեմարանին հարակից 2,5 հա այգին:

Եկեղեցուն են հանձնվել նաեւ Գավառ քաղաքի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի եւ Արագածոտնի մարզերում գտնվող եկեղեցիները:

Երկու տարի առաջ կառավարությունը եկեղեցուն հանձնեց Կեչառիսի վանական համալիրը, ինչպես նաեւ Ծաղկաձորի ամառանոցային տնտեսության ընդունելությունների տան քառ 3 հարկանի շենքը:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ՌՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Թուրքական մամուլն անհաջող առիթ է գտել նոր քաղաքական շարաշահումների համար

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔ: Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի՝ Սեւրի պայմանագրի կնքման 80-ամյակը հանդիսավոր նշելու որոշումը եւ Երեւանի փողոցներից մեկն ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի անունով կոչելու կարգադրությունն առաջ է բերել Թուրքիայի տարակուսանքը: Անկարայում գտնում են, որ դա վկայում է այն մասին, որ Հայաստանի ղեկավարությունը «հանձնվել է ԱՄՆ-ում հիմնավորված դաշնակներին» եւ իր արտաքին քաղաքական գործունեության մեջ ղեկավարվում է նրանց շահերով: Այդ մասին գրել է թուրք տեսաբան Սեմիհ Իդիզը՝ վկայակոչելով Թուրքիայի վարչապետի աշխատակազմի աղբյուրները:

1920 թ.-ի Սեւրի պայմանագիրը, ըստ որի Հայաստանը պետք է որոշ չափով վերականգներ իր պատմական սահմանները, թուրք տեսաբանների կարծիքով, դարձել է Թուրքիայում «անկախության համար պատերազմ» հրահրող կայծ: Սեւրի պայմանագրով որոշված սահմանները, գտնում են Թուրքիայում, «միանգամայն անհիմն են եղել եւ հետագայում հող են նախապատրաստել հայերի եւ քրդերի միջեւ հակամարտությունների համար»:

Մինչդեռ, հայկական դիվանագիտական շրջանակներում թուրքական մամուլի տվյալ հրապարակումը գնահատել են որպես վաղուց անցած պատմական իրադարձություններին միջազգային քաղաքական երանգ տալու փորձ, որոնք այժմ գիտական ուսումնասիրությունների առարկա են հանդիսանում: Սեւրի պայմանագրին նվիրված առաջիկա միջազգային խորհրդաժողովը միանգամայն գիտական բնույթ կկրի: Ինչ վերաբերում է Երեւանի փողոցներից մեկը Վուդրո Վիլսոնի անունով կոչելուն, ապա դրանում առավել եւս քաղաքականություն չկա, քանի որ 20-րդ դարի մեծագույն քաղաքական գործիչներից մեկի անունը արդեն վաղուց եւ հաստատուն կերպով մտել է հայ ժողովրդի պատմության մեջ:

Հայերը չպետք է դիմեին Թուրքիայի արտգործնախարարությանը

ԱՆԿԱՐԱ, 26 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական մամուլը շարունակում է մեկնաբանել Կարսում հայկական պատվիրակության հետ տեղի գտած միջադեպը: «Սաբահ» թերթի աշխատակից Ուլուսը գրում է, որ եթե 4 պատվիրակները որպես զբոսաշրջիկներ գային Թուրքիա եւ չդիմեին Արտգործնախարարությանը հրավեր ստանալու համար, նրանք որեւէ խնդիր չէին ունենա: «Վստահ եղեք, ոչ ոք չէր էլ նկատի նրանց գոյությունը: Հայերի սխալը մեր արտգործնախարարությանը դիմելու մեջ է», գրում է թերթը:

Ռուսաստանի գլխավոր մուֆթին հավանություն է տվել վահաբականությունը արգելելուն

ՍՈՍԿՎԱ, 26 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Սիմադ Կադիրովը, Չեչնիայում արգելելով վահաբականությունը, միանգամայն խելամիտ է վարվել», երեքշաբթի հայտարարել է Ռուսաստանի մուֆթիների խորհրդի նախագահ շեյխ Ռաֆիլ Գայնուտդինը: Նա «ծիծաղելի բան» է անվանել չեչենական վարչակազմի ղեկավարի որոշումը դադարեցնել վահաբիստական կազմակերպությունների գործունեությունը հանրապետությունում եւ փակել այն մզկիթները, որտեղ նրանք հավաքվում էին: Միեւնույն ժամանակ Ռ. Գայնուտդինն ընդգծել է, որ «դաշնային մակարդակով վահաբականության արգելման հարցին, ինչպես եւ «երկրաբանության մզկիթների» փակմանը հարկավոր է մոտենալ չափազանց զգույշ»: Սկզբնապես, ըստ նրա, «հարկ է հստակ որոշել, թե ինչ է վահաբականությունը»: «Այլապես մենք կարող ենք ոտնահարել հավատացյալների իրավունքները, որոնք ոչ ահաբեկիչներ են, ոչ ծայրահեղականներ», ընդգծել է մուֆթին:

Բեռնատարը 18 տոննա արձիձ էր փոխադրում Ադրբեջան

ՄԱԽԱՉԿԱԼԱ, 26 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔ: Մախաչկալայում կալանվել է մի «ԿԱՄԱԶ», որը Դաղստանից 150 հազար ռուբլի արժողությամբ 18 տոննա արձիձ էր փոխադրում Ադրբեջան: Այդ մասին հաղորդել են Դաղստանի ՆԳՆ մամլո կենտրոնից: Մերենայի տերը կալանման պահին զինված դիմադրություն է ցույց տվել իրավապահ մարմինների աշխատակիցներին: Վարորդին ուղարկել են ֆենչական մեկուսարան, տարվում է հետաքննություն: Նա հրաժարվել է որեւէ բան հայտնել արձիձի ծագման մասին:

ՓԱՐԻԶ

113 մարդ է զոհվել «Կոնկորդի» խորտակումից

ՓԱՐԻԶ, 26 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ֆրանսիական «Կոնկորդ» լայնաթռիչքների բոլոր չվերթները չեղյալ են հայտարարվել մինչեւ այն աղետի պատճառների լրիվ բացահայտումը, որ երեքշաբթի տեղի է ունեցել Փարիզի Շարլ դը Գոլի անվան օդանավակայանում: Air France ավիաընկերությունը հաղորդել է, որ թռիչքից անմիջապես առաջ մեխանիկներն ստուգել են շարժիչներից մեկի վրա, եւ չվերթը ուշացել է: «Կոնկորդը» աղետի է ենթարկվել օդ բարձրանալուց հետո մի քանի րոպե անց, զոհվել է 113 մարդ: Air France-ը հայտարարում է, որ աղետի պատճառ է դարձել շարժիչներից մեկի բոցավառվելը: Գրեթե բոլոր ուղեւորները եղել են գերմանացիներ, որոնք մտադիր էին Նյու Յորքում սկսել կրուիզը: Ֆրանսիայի տրանսպորտի նախարար Կլոդ Գեյսոն հայտարարել է, որ կասեցվում է ֆրանսիական պատմության մեջ ամենախոշոր այդ աղետի պատճառների երեք առանձին հետաքննություն:

Իսկ Մեծ Բրիտանիան որոշել է իր «Կոնկորդները» թողնել շահագործման մեջ:

ՊՐԹԱՑԻԿ

Ադրանային նշանների պատերազմը խաղողի մթերումների խոչընդոտ

Ընթացիկ տարին Հայաստանի համար բերքառատ է: Սակայն, ցավոք, անգամ այդ առատությունն ավելի շատ մտահոգություններ, քան ուրախություն է առաջացնում: Դրանցից հիմնականը գյուղմթերքների իրացումն է: Ծիրանից հետո մեզ սպասում է խաղողի բերքն իրացնելու անհամեմատ ավելի բարդ խնդիրը: Խաղողմթերող հիմնական ձեռնարկության Երևանի կոնյակի գործարանի նախագահ Պիեռ Լառեյը վերջերս իր հրավիրած մամուլի ասուլիսում հայտարարեց, որ մթերումները կիրականացվեն միայն իրենց պատկանող ադրանային նշանների հետ առաջացած խնդիրների դրական լուծման դեպքում: Մասնավորապես այդ խնդիրներից մեկը վերաբերում է «Գրեյթ Արարաս» ադրանիշով կոնյակի արտադրությանը: Հայաստանի կառավարությունից պահանջվում է արգելել այս ադրանիշով կոնյակի արտադրությունը, «ինչը մեծ վնաս է հասցնում ԵԿԳ-ին, ստեղծելով ուղղակի մրցակցություն»: Այս առթիվ առավել լիարժեք պատկերացում ստանալու համար հարկ համարեցինք ծանոթանալ նաեւ «Գրեյթ Արարաս» ընկերության տեսակետին:

Այսպիսով, «Պեռնո Ռիկարի» բարձրացրած առաջին հարցն առնչվում է «Գրեյթ Արարաս» ադրանիշի գրանցման ժամկետին:

ԵԿԳ նախագահ **Պիեռ Լառեյը** փաստում է.

- «Գրեյթ Արարաս» ադրանային նշանը Հայաստանում գրանցվել է «Պեռնո Ռիկարի» կողմից 1999 թ. մայիսի 25-ին Երեւանի կոնյակի գործարանը եւ «Արարաս» ադրանային նշանը ձեռք բերելուց հետո, ինչը հակասում է միջազգային օրենքներին:

Սինչդեռ «Գրեյթ Արարատի» նախագահ Տիգրան Արզականցյանն այլ փաստեր է ներկայացնում.

- 1998 թ.-ին «Արարաս» գինուկոնյակի գործարանի հետ 5 տարով պայմանագիր կնքեցինք «Արարաս» ադրանիշն օգտագործելու մասին, շուրջ 1 մլն դոլար ծախսելով պատվիրեցինք պիտակներ: Սակայն շուտով անտեսելով այս պայմանագիրը եւ ոտնահարելով գործող օրենքները, մեզ սպիտեցին հրաժարվել այդ ադրանիշից: Այն ժամանակվա վարչապետ Արմեն Դարբինյանի կարգադրությամբ արգելվեց մեր ադրանշի (շուրջ 100 հազ. լիտր) արտահանումը Ռուսաստան: Ընդ որում, ադրանշն արդեն օդանավակայանում էր, Ռուսաստանի ակցիզային դրոշմանիշները փակցված ըստեղծի վրա:

Երկրորդը բուն անվանման հարցն է: ԵԿԳ-ի ղեկավարները համոզված են, որ «Գրեյթ» ածականը ավելացնելով, «Արարաս» ադրանային նշանը զուտ ձեւավորման հարցն չի փոխվում, եւ այդ մասին վկայում է Հայաստանագրի մշակած կարգը: Այսինքն խախտվել է այդ կարգը եւ ոչ միայն վերոնշյալ ածականի պատճառով: Ըստ նույն կարգի, չի կարելի գրանցել այն ադրանային նշանները, որոնք արտասանման, ձեւավորման, հնչողության եւ այլ պատճառներով կարող են սպառողների շփոթություն առաջացնել մինչ այդ գրանցված այլ ադրանային նշանների հետ: Հետեւաբար ԵԿԳ-ն պահանջում է, որ «Գրեյթ Արարատը» հրաժարվի իր ադրանային նշանից, քանզի դրա գոյությամբ խախտվում են արդյունաբերական սեփականության միջազգային նորմերը:

Տիգրան Արզականցյան. - Մենք պատվերներ ունեինք մերձբալթյան երկրներից եւ Գերմանիայից եւ որոշեցի մեր պարտավորությունները կատարենք, Ֆրանսիացիների հետ ջենտլմենական համաձայնության եկանք վիճելի «Արարաս» ադրանիշից մեր հրաժարվելու մասին: Մեր ադրանային նշանն այժմ միայն մեծ Արարատն է: Եղվարդի գինանոցն առյուծով: «Արարաս» ադրանային նշանից հրաժարվելուց հետո ֆրանսիացիներն իրենց գոհունակությունն ու շնորհակալությունն են հայտնել, եւ մինչեւ վերջերս որեւէ խնդիր գոյություն չուներ: Եվ հանկարծ, կարծես երեկ տեսան մեր ադրանային նշանը: Եթե նրանք դժգոհ են, թող դիմեն դատարան: Մենք ոչ ոքի հետ համաձայնեցնելու խնդիր չունենք, մեր փաստաթղթերը ձեւակերպված են միջազգային պահանջներին համապատասխան: «Գրեյթ Արարատը» «Գրեյթ վելլիի» դուստր ձեռնարկությունն է, որը բացի կոնյակից զբաղվում է նաեւ այլ ադրանիշների արտադրությամբ: Եվ եթե առաջնորդվենք նույն տրամաբանությամբ, ապա «Պեռնո Ռիկարը» շուտով կպահանջի նաեւ Արարատ մարգի եւ խաղողի անվանափոխությունը: Ի վերջո, եթե իրենք խնդիրներ ունեն արտադրության կազմակերպման եւ ադրանշի իրացման հետ, ապա մեր մեղքը ո՞րն է: Ասեմ նաեւ, որ մեր ադրանային նշանը զուտ ձեւավորման եւ այլ չափանիշներով անհնար է շփոթել ԵԿԳ-ի ադրանային նշանի հետ:

Այսպիսով, երկու կողմերի փաստարկներն էլ կարծես թե հիմնավորված են եւ ադրանային նշանի խնդրի կարգավորումը հետաձգվում է: Այստեղ ակնհայտ է մեկ փաստ ԵԿԳ-«Գրեյթ Արարատ» հակասությունն ուղղակի հետեւանք է Արմեն Դարբինյանի կառավարության հայտնի չէ, թե ում շահերից բխող (կամ գուցե հայտնի՞ է) եւ անհեռանկար քայլերի: Փաստորեն, ի խախտումն Հայաստանի օրենսդրության, ադրեն համաձայնեցված պայմանագրով ադրանիշի օգտագործման իրավունք ունեցող ընկերությունը զրկվել է դրանից եւ այդ ադրանիշը վաճառվել է մեկ ուրիշին: Այժմ էլ նույն կերպ փորձ է արվում ստիպել «Գրեյթ Արարատին» հրաժարվելու նաեւ ներկայիս ադրանիշից, որը մինչեւ վերջերս ԵԿԳ-ին չէր անհանգստացնում: Հակառակ դեպքում, վերջինս կհրաժարվի խաղող մթերելուց, ինչի պատճառությունը դարձյալ «արհեստավարժների» շնորհիվ ԵԿԳ-ն չի ստանձնել: Փոխարենը «Գրեյթ Արարատը» որոշակի վարկային աջակցության դեպքում խոստանում է մթերել ողջ խաղողի բերքն ավելի բարձր գներով եւ տեղում վճարելով: Այդուհանդերձ, խաղողի մթերումների իրականացումը կասկածի տակ է եւ հույժ անհրաժեշտ է, որ մինչեւ ադրանիշի «պատերազմի» ավարտը այս հարցում գտնվի միջանկյալ լուծում: Այլապես առաջ բերք է հասունանում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ինտերնետը Հայաստանում

Այսօր կառավարության ընդունելությունների տանը մեկնարկեց «Ինտերնետը եւ հասարակությունը» թեմայով միջազգային խորհրդաժողով: «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ասպարեզի զարգացումն անկարելի է պատկերացնել՝ չունենալով զարգացման պատշաճ քաղաքականություն: Խորհրդաժողովի բոլոր թեմաները միավորողը տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ասպարեզում ազգմավարության ընդհանուր սկզբունքների, ինչպես նաեւ առանձին ոլորտների տեղեկատվականացման քաղաքականությունների հարցն է», ասված է խորհրդաժողովն ամփոփող մամլո հաղորդագրության մեջ:

Ընդհանուր առմամբ երկու օր նախատեսող քննարկումները կվերաբերեն դոնորային ծրագրերին, ինտերնետի հանրային մատչելիությանը, պետական կառավարման համակարգի բարելավմանը, ավանդական մեդիա-ինտերնետ փոխհարաբերություններին, ինտերնետի տուկային, էլեկտրոնային առեւտրին եւ կրթության ու մշակույթի վրա ինտերնետի ազդեցությանը:

«Նման խորհրդաժողով Հայաստանում առաջին անգամ է կազմակերպվում՝ թեկուզ նկատի առնելով տարբեր երկրներից մասնակիցներին», ասաց խորհրդաժողովի կազմակերպիչ «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի» նախագահ Հրաչ Բայադյանն՝ այս առթիվ հրավիրած մամուլի ասուլիսում: Քննարկման թեմայի շրջանակների շուրջ 30 մասնագետներ են հրավիրվել Եվրոպայից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից նաեւ Ադրբեջանից: Մասնակցելու են նաեւ տիյուռեահայեր:

Հայաստանում, ինտերնետի հանրային մատչելիության չգոյության պայմաններում, տնտեսության մեջ վերջինիս հնարավորությունների օգտագործման, կրթական, մշակութային նոր միջավայրերի եւ այլնի գոյության մասին խոսելն ավելորդ է:

«Հնարավոր է, որ այս խորհրդաժողովը նպաստի այսուհետ այս ասպարեզն առավել լափով ուշադրության կենտրոնում պահելուն», նշեց պրն Բայադյանը:

Լ. Գ.

Սահմանապահ նորակոչիկները երդվեցին

Հուլիսի 25-ին ՀՀ ԱԱՆ սահմանապահ զորքերի 1-ին սահմանապահ ջոկատում տեղի ունեցավ նորակոչիկ զինվորների երդման արարողությունը, որին ներկա էին ՀՀ ԱԱ նախարար, գեներալ-լեյտենանտ Կարլոս Պետրոսյանը, ՀՀ ԱԱՆ սահմանապահ զորքերի հրամանատար, գեներալ-մայոր Լեւոն Ստեփանյանը, Հայաստանում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերի օպերատիվ խմբի պետ, գեներալ-լեյտենանտ Միխայիլ Նայմիլոն, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, ինչպես նաեւ մարզի այլ ղեկավար անձինք եւ նորակոչիկների ծնողներ:

ՀՀ ԱԱՆ հասարակայնության եւ մամուլի հետ կապի ծառայություն

Կիմ Բալայանը պատգամավոր է

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ Սահմանադրական դատարանը որոշեց Երեւանի թիվ 5 ընտրատարածքից օրինական ընտրված Ազ պատգամավոր ճանաչել ՀՅԴ անդամ Կիմ Բալայանին: Այս որոշումը ՍԴ-ն կայացրեց հուլիսի 26-ի նիստում, որտեղ քննվում էր հիշյալ ընտրատարածքում պատգամավորի լրացուցիչ ընտրության հուլիսի 9-ի վերավերակության արդյունները վիճարկելու վերաբերյալ գործը: Որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Անգամ ընդդիմությունը մեղմում է իր սկզբունքայնությունը՝ Հայաստանի արտաքին պարտքին ի տես

Սկիզբը էջ 1

ՀՅԴ-ի միասնական դիրքորոշման արտահայտիչն Արմեն Ռուսամյանն էր, որն, ինչպես եւ «Օրինաց երկրի» ներկայացուցիչը, առաջադրեց իր խմբակցության 3 հիմնական պայմանները: ՀՅԴ-ն պատրաստ է կողմ քվեարկելու, եթե փաստաթղթում ամրագրվի, որ էլեկտրաէներգիայի սակագինը չի բարձրանալու 3 տարվա ընթացքում, ինչպես նաեւ՝ ռազմավարական ներդնողին ոչ մի պարագայում չտրվի թույլատրվի էլեկտրաէներգիայի արտադրությամբ էլ զբաղվել: Ըստ նրանց երրորդ պահանջի՝ էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի հարցերը խստորեն պետք է վերահսկվեն պետության կողմից (այս վերջին կետը կոչված է կանխարգելելու պատգամավորների արտահայտած մի մտահոգության իրեղեն վանգը. որպեսզի գնորդ կազմակերպության մտքով չանցնի էլեկտրաէներգիան գնել Թուրքիայից կամ վաճառել այդ երկրին): Սակայն, ընդհանուր առմամբ ՀՅԴ-ն հանդուրժողաբար է վերաբերվում սեփականաշնորհման գաղափարին՝ ողջամտությամբ հայտարարելով. «Եթե այս գործընթացը սկսել ենք, ուրեմն՝ դրա ծայրահեղ անհրաժեշտությունը կար»:

«Հայաստան» պատգամավորական խումբը ներկայացրեց Մյասնիկ Մալխասյանը: «Մենք սկզբունքորեն կողմ ենք սեփականաշնորհմանը», որպես նախաբան ասաց նա: Այնուհետեւ շարադրեց իր խմբի մի քանի պատկերացումները՝ փաստաթղթում պահանջվող փոփոխությունների վերաբերյալ: Համոզված ընդդիմության դիրքերից ելույթ ունեցավ կոմկուսի ներկայացուցիչ Հրանտ Ոսկանյանը: Նրա ելույթն այժմյան կոմկուսին բնորոշ մի կարոտալի հայացքի էր նման՝ անցյալին ուղղված: Ի դեմ, Աժ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանն իր ելույթում բափանցիկ մի ակնարկ հղեց կոմկուսին. «Թե մենք բոլորս ինչ ենք «շահելու» այս կառավարության տաղանդից՝ գիտենք: Ամեն դեպքում խորհրդարանական ընդդիմությունը քննադատելուց բացի, թող բավականաչափ անկեղծություն ունենա՝ նախարարական աթոռ զբաղեցնող իր խմբակիցներին ես կանչելու»:

«Կայունության» ու ՀԺԿ-ի անունից առհասարակ որեւէ մեկը չխոսեց: Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ֆինանսավարկային, բյուջետային ու տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Վարդան Խաչատրյանը եւ էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանը: Վերջինս հավաստիացրեց, որ առաջիկա 3 տարվա ընթացքում սակագինը չի բարձրանալու:

Այսպանով, սակայն, քվեարկությանը նախորդող փուլը չավարտվեց, որովհետեւ լուրջ վիճաբանություններ ծագեցին Աժ փոխխոսնակի եւ խորհրդարանական ընդդիմության որոշ մասի միջեւ: Այստեղ, անշուշտ, իր անառարկելի դերը խաղաց քաղաքական գործոնը: Ընդդիմությունը, մտավախելով, որ նախագիծը կընդունվի առաջին ընթերցմամբ, օրենքը վկայակոչեց ու պահանջեց, որպեսզի նախագիծն ընդունված համարելուն անհրաժեշտ թվականը հանդիսանա 66 ձայնը՝ Աժ ընդհանուր կազմի պարզ մեծամասնությունից ելնելով: Իր հերթին Տիգրան Թորոսյանը, մտավախելով, որ նախագծին աջակցող այդ քանակության ձայներ ամենայն հավանականությամբ չհավաքվեն, պնդում էր, որպեսզի քվեարկությունն անցկացվի ներկաների մեծամասնության ուժով՝ 55 ձայն (ներկա էր 108 պատգամավոր): Ընդդիմությունն իր պահանջը հիմնավորում էր այն օրենքով, որ պետբյուջեի վրա անդրադարձող փաստաթղթերն ընդունված են համարվում պատգամավորների միայն պարզ մեծամասնության ուժով: Ի վերջո, փոխխոսնակը որոշում կայացրեց հօգուտ իր տարբերակի:

Այդ բանավեճի կարիքն, ի դեպ, ամենեւին էլ չկար, որովհետեւ երկար սպասված քվեարկությունը վերջապես կայացավ, ու էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման օրենքի նախագիծն առաջին ընթերցումով ընդունվեց... 64 ձայնով: Դեմ քվեարկեցին ընդամենը 37 պատգամավոր, 5-ը ձեռնպահ էին, բեռեռ սպասվում էր (ելույթներից ու պատգամավորների շրջանում տիրող տրամադրություններից դատելով), որ ընդդիմադիրների թիվն անհամեմատ մեծ է լինելու: Ինչպես եւ կանխագուշակել էինք, ՀՀԿ-ն, «Կայունությունը» կողմ էին քվեարկել, կողմ էին նաեւ ՀՅԴ-ն, ԱԺՄ-ն (բացի Սադոյանից), ՀԺԿ-ի գերակշիռ մասը, «Հայաստանը»: Ընդդիմադիր թեւում էին «Օրինաց երկիրը», «Իրավունք եւ միաբանությունը», կոմկուսը:

Առջեւում դժվարին «ճակատամարտն» է՝ երկրորդ ընթերցումը: Էներգետիկ բաշխիչ ցանցերի ճակատագրով հետաքրքրվողներին տեղեկացնենք, որ երկրորդ փուլի քննարկումները հետաձգվել են 48 ժամով եւ կվերսկսվեն ուրբաթ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՈՍԿԵՓԱԿԻՑ

ՄԱՍՈՒԼ

Թերթ ֆիշ են կարդում, հատկապես երիտասարդները

Ի՞նչ դեր ունի այսօր հայ մամուլը հասարակության կյանքում, ինչպիսի՞ն են մամուլ-հասարակություն փոխհարաբերությունները:

Փորձեցինք այդ մասին հարցնել նախ շարքային քաղաքացիներին, ապա նաեւ մամուլի կրողների ու ախտասողներին: Կարծիքները տարբեր էին եւ բազմազան, բայց գերիշխողը անվստահությունն ու թերահավատ վերաբերմունքն էր թերթերի, տպագրվող նյութերի նկատմամբ: Մեծամասնությունը պնդում էր, թե թերթերը օբյեկտիվ չեն, տեղեկատվությունը քաղված չէ հավաստի աղբյուրներից: Որպես ասվածի վկայություն նրանք օրինակ էին բերում թերթերում հանդիպող հերքումները, որոնցով ընթերցողից ներողություն էին խնդրում նախորդ համարներում լույս տեսած սխալների համար:

Կային մարդիկ, ովքեր հավատը թերթի նկատմամբ, այնուամենայնիվ, չէին կորցրել: Լրագրավաճառներից էլ տեղեկացանք, որ թերթերի շարժը կայուն չէ: Օր է լինում՝ թերթերն արագությամբ սպառվում են, եւ ընդհակառակը: Նրանցից մի քանիսն, օրինակ, բողոքում էին, թե իրենք յուրաքանչյուր թերթերից մեկական օրինակ են ստանում, մյուսներն էլ թե՝ կեսօրին ընդհանրապես գնորդ չեն ունենում: Իհարկե, կային նաեւ այնպիսի կրողներ, որոնցում թերթերի վերադարձը փիչ էր. օրվա վերջում մնում էր դրանց 1/3-ը:

Իսկ տարիքային առումով ովքե՞ր են այսօր առավել շատ թերթ կարդում: Լրագրավաճառները նշեցին, որ երիտասարդներն ընդհանրապես մտահոգված չեն թերթ կարդալով. «Հազվագյուտ երիտասարդ լինի, որ թերթ կարդա»: Գնորդների տարիքը հիմնականում 40-50-ն անց է:

Ի՞նչն է մեր հասարակության, մասնավորապես՝ երիտասարդների թերթ չկարդալու հիմնական պատճառը: Ըստ զրուցակիցներիս՝ մի քանիսն են. նախ ֆինանսական պայմանները: Թերթ կարդալ ցանկացողները փիչ չեն, սակայն բոլորը չէ, որ գնելու հնարավորություն ունեն:

Լրագրավաճառներից մեկն, օրինակ, ուներ մի քանի այցելուներ, որոնք թերթերը կարդում եւ վերադարձնում էին:

Այս պատճառը կրողների բացակայությունն է: Քաղաքի մի շարք վայրերում, հատկապես ծայրամասերում բնակչությանը խիստ մտահոգում է այս փաստը:

Պատճառներից մեկն էլ քաղաքականությունն է, եւ դա հիմնականում վերաբերում է երիտասարդներին: Նրանք զգնում են, որ հայաստանյան մամուլը երիտասարդության խնդիրներին չի անդրադառնում եւ հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է քաղաքականության վրա:



«Թերթ հազվադեպ եմ կարդում, քանի որ քաղաքականությունից շատ հեռու եմ եւ ինձ հուզող թեմա այնտեղ համարյա չեմ գտնում», այսպես են մտածում երիտասարդներից շատերը:

Մի մասի կարծիքով էլ խանգարող հանգամանքը ոչ թե քաղաքականությունն է, այլ լավ վերլուծել չկարողանալը:

Ի՞նչ կնախընտրեր կարդալ այսօր հայ ընթերցողը թերթում: Պարզվեց՝ այնպիսի նյութեր, որոնք նորություն լինեն, որոնց մինչ այժմ հայաստանյան մամուլը չի անդրադարձել, որոնցում քննարկվեն հասարակությանը հուզող հարցերը եւ ոչ ներքաղաքական խմորումները:

Ահա այս ամենը նկատի առնելով՝ թերթերի սպառման, հատկապես նրանց ես վերադարձի պրոբլեմը փորձեցինք պարզաբանել մամուլի տարածման գործակալության փոխտնօրեն Արալուսյան Մանուկյանի տեսանկյունից: «Թերթերի սպառումն այսօր, իրոք, շատ վատ է, եւ վերադարձը մեծ թիվ է կազմում», նշեց պրն Մանուկյանը, սակայն նա ընդհանուր վերադարձը 10 տոկոսով աճել է անցյալ տարվա համեմատությամբ»: Ինչ վերաբերում է կրողներում թերթերի անհավասար բաշխմանը, պրն Մանուկյանն ասաց, որ «այստեղ բողոքելու հարկ չկա, քանի որ յուրաքանչյուր լրագրավաճառ թերթերն ստանում է ըստ իր ներկայացրած հայտի: Վերջապես, մենք էլ շահագրգռված ենք, որ թերթերը լավ իրացվեն: Իհարկե, թյուրիմացությունները չեն բացառվում»: (*) **«Ազգ»**ը համաձայն չէ այս պնդմանը, քանզի տարբեր լրագրավաճառներ ավելի մեծ հայտեր են ներկայացնում, քան ստանում են:

Թերթերի բարձր գնի հետ կապված՝ պրն Մանուկյանն ասաց, որ ինքը ոչնչով օգնել չի կարող, քանի որ յուրաքանչյուր խմբագրություն ինքն է որոշում իր թերթի գինը:

Բացի այդ, պարզեցինք, որ թերթերն առավելապես սպառվում են հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին, իսկ ամառը, պրն Մանուկյանի խոսքերով, թերթերի համար «մեռյալ» սեզոն է:

ՄԱՐԻԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Կրթական վարկը՝ հանգուցալուծման փայլուն միջոց

Ռուսաստանում այսուհետ կկիրառվի մի շատ արդյունավետ նորույթ՝ «Ռոսբերբանկն», այսպես կոչված, կրթական վարկ կտրամադրի այն ուսանողներին, որոնց սոցիալական պայմանները թույլ չեն տալիս վճարովի ուսում ստանալ ռուսաստանյան բուհերում:

Խոսքը բնավ էլ «ծույլիկների» մասին չէ: Կրթական վարկի հավակնորդները կարող են լինել միայն լավ սովորող ուսանողները: Ի դեմ, վարկը կարող է տրամադրվել ոչ միայն գրավի դիմաց, այլեւ առանց գրավի, եթե, իհարկե, վարկի գումարի վերադարձը կերաշխավորի երրորդ անձը: Որպես երրորդ անձ կարող են հանդես գալ թե ֆիզիկական, թե իրավաբանական անձինք ու նաեւ հասարակական կազմակերպություններ, այլ հասարակական ու պետական հիմնարկներ:

Վարկը մարվում է ըստ վարկավորողի հետ կնքած պայմանագրի: Գումարի վերադարձի ժամանակը չի եզրափակվում բուհական ուսման տարիներով, այլ կարող է երկարաձգվել այն պայմանով, որ, աշխատանքի անցնելով, հենց ինքը՝ նախկին ուսանողը, պարտը մարի աշխատավարձի հաշվին:

Կարծում եմ, հարկ չկա ներկայացնելու նման հնարքի կարեւորությունը նաեւ Հայաստանի համար: Բարձրագույն կրթության ձգտողները մեզանում շատ են: Եվ նույնքան շատ են նրանք, ովքեր մրցութային կարգով զրկվելով պետպատվերի անվճար տեղերից, որոշում են հաճախել վճարովի բաժին՝ ծանր սոցիալական պայմաններից ելնելով բնավ հույս չունենալով վճարել հասանելիք գումարը: Անվճարունակներից շատերը փայլուն առաջադիմություն են դրսեւորում, ինչը բուհի համար բարոյական արգելք է հեռացման հրաման արձակելու: Այսպես էլ գոյատեւում են տարեցտարի բուհն ու առաջադեմ, բայց ոչ վճարունակ ուսանողը. մեկը՝ շվարած, թե ինչ վարվի, մյուսը՝ պարտքեր կուտակելով: Հրաշքի ակնկալիքով, ուսման ծառայությունները ծնողների հետ գրոհում են պետական այցելուներն ու տարբեր կարգի ունեւոր բարեգործների դռները: Բայց վճարի գումարը հայթայթելու հույսը, որպես կանոն, խաբուսիկ է լինում: Անվճարունակ ուսանողության հիմնահարցը վերածվել է լուրջ սոցիալական բարդույթի, որն այսպես թե այնպես պետք է լուծվի: Ինչո՞ւ չդիմել ռուսաստանյան տարբերակին: «Հայխնայբանկն» անվանվելով «ժողովրդական բանկ»՝ այսօր իր առաքելությունը տեսնում է միայն կոմունալ ծառայությունների, հեռախոսավարձերը գանձելու մեջ: Ժողովուրդն այլեւս չի ծանրաբեռնում այդ համակարգը խնայողություններ ի պահ դնելու ցանկությամբ: Այնպես որ, անցնելով սպասարկման նոր ձեւին, «Հայխնայբանկը» կհամապատասխանի իր «ժողովրդական» կոչմանը:

Նորարարության կիրառման պայմանները, անշուշտ, կարելի է հստակեցնել, բայց ռիսկի պետք է դիմել, առավել եւս երբ անծայրածիր Ռուսաստանը նման ռիսկից չի խուսափում: Թվում է, որ համագործակցությունը երկակի օգտավետ կլինի. մի կողմից «Հայխնայբանկի» վարկառուների թիվը կշատանա, կաճեն եկամուտն ու շրջանառու միջոցները, մյուս կողմից՝ ուսանողները, բուհում սովորել ցանկացողներն ու նրանց ծնողները, ինչպես ասում են, ազատ շունչ կքաշեն:

Շունչ կքաշի եւ պետությունը՝ ինչպես լուծում առաջարկելով եւս մի ծանրագույն, բայց շատ կարեւոր սոցիալական հիմնահարցի, որը նաեւ քաղաքական հնչեղություն ու ազդեցություն ունի:

ՀԱՐՈՒՍՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՆԱՅՔ

Տարագիրների վերաբերյալ փաստերն արձանագրվում են

Բայց ո՞վ է լուծելու խնդիրները

ՀՀ-ում գործազուրկների 64 տոկոսը կանայք են եւ պատահական չէ, որ տարագիրների (միգրանտների) շարքում նրանց տեսակարար կշիռը խիստ բարձր է եւ ունի աճի միտում: Սա են վկայում «Գործարար կին» հասարակական կազմակերպության եւ «Զարթնիր-89» բարեգործական միության հետազոտությունները, որոնք ամփոփվել են «Կանանց անկանոն միգրացիայի խնդիրները Հայաստանում» սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության մեջ: Հուլիսի 26-ին գրքի հայտահանդեսին հրավիրված լրագրողներին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի միգրացիոն ծրագրի ղեկավար Նիլին Բարուահը տեղեկացրեց, որ ուսումնասիրությունը կատարվել է փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակներում: Երեքամսյա ծրագրի ղեկավարը «Գործարար կին» ՀԿ նախագահ Անահիտ Սարգսյանն է: Երեք տարվա ընթացքում մոտ 40 հազ. դոլար է հատկացվել 20 ՀԿ-ների՝ 13 նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար: Մի շարք ծրագրեր իրականացվել են կազմակերպությունների համատեղ մասնակցությամբ, որի նպատակը, ըստ ֆինանսավորողների, ՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացումը եւ դրանց աշխատանքին ծանոթանալն էր:

Տեղեկությունների բազա ստեղծելու եւ հիմնախնդիրների լուծման ուղիներ որոնելուց անկախ պրոբլեմները շարունակում են գոյություն ունենալ եւ ավելանալ, ուստի առավել օրախնդիր հարցը դրանց կարգավորումն է: ենթադրվում է, որ առկա է պոտենցիալ կին միգրանտների իրազեկության բարձրացման խնդիր, անհրաժեշտ է միգրացիայի կարգավորման պետական քաղաքականություն, այս մասին հայեցակարգի, ինչպես նաեւ «Արտագնա աշխատանքի կազմակերպման» օրենքի ընդունում, տարագիրների փոխադրումը կազմակերպող անհրավատու մարմինների նկատմամբ հսկողության ակտիվացում եւ այլն: Ի դեպ, ըստ ուսումնասիրությունների, սոցիալ-քաղաքական անկայուն իրավիճակն իբրեւ արտագնա աշխատանքի դրդապատճառ համարում է հարցվածների 15,9 տոկոսը (պատահական ընտրությամբ հարցվել են 300 կին, որոնք մեկնել եւ վերադարձել են): Սակայն նյութական ծանր կացությունն առաջնահերթ համարողները պարզապես հակված չեն առավել գլոբալ եզրահանգումների: Իսկ մինչ այդ շատ կանայք իրենց ուսերին են վերցնում ընտանիքի նյութական բարեկեցությունն ապահովելու պարտականությունը, որն հաճախ հոգեկան լարվածության պատճառ է դառնում (երեխաներից, ամուսնուց, ընտելացած միջավայրից անջատ ապրելու եւ դրանով պայմանավորվող այլ բարդություններ):

Ուսումնասիրողների կարծիքով, կանանց անկանոն միգրացիան առաջիկա գոնե 5-10 տարիների համար ունի շարունակական աճի միտում: Ու քանի որ տարագրության իրական խորքում բազմաթիվ են կանանց իրավունքների ոտնահարման դեպքերը, այս ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել թե՛ հիմնախնդրի լուծմանը շահագրգիռ մարմինների, թե՛ հենց իրենց՝ մեկնող կանանց համար:

Անկայուն կին միգրանտների 35,5 տոկոսը (մեկնելու շարժառիթից անկախ) դրսում աշխատել է, բայց ուղեւորության հետ կապված պատասխաններն արդարացած է համարում միայն նրանց 64,9 տոկոսը: Սա գլխավորապես կապված է նյութական վիճակի բարելավման հետ: Բայց դրան զուգահեռ առկա են աշխատանքային ծանր պայմանները՝ 26,8 տոկոս, աշխատանքի դիմաց չվճարվելը եւ խաբվելը՝ 16,3 տոկոս, հարկադրված այլ աշխատանք կատարելը՝ 17,1 տոկոս, ոտնձգության հետ (11,4 տոկոս) կամ առողջական (9 տոկոս) խնդիրները:

Իսկ մինչ գործատուները, նրանցից շատերը խնդիրներ են ունեցել տուրիստական չարտոնագրված գործակալությունների հետ: Այդ կազմակերպությունների 34,6 տոկոսը մատուցել է ամբողջովին կեղծ ծառայություններ, 30,7 տոկոսը խախտել է պայմանավորվածության հիմնական կետերը:

«Կանանց անկանոն միգրացիայի խնդիրները Հայաստանում» ծրագրի ընթացքում հաստատված անանուն հեռախոսակապի մեթոդը այսուհետեւ էլ կարող է օգտակար լինել: Սեմինարներին, հեռուստեսեսային եւ ռադիո հաղորդումներին, մամուլի հրապարակումներին զուգահեռ կարող է անհրաժեշտ ինֆորմացիա եւ խորհուրդներ տալ տարագրության որոշում ընդունած կանանց:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Անշարժ գույքի գները օր-օրի ընկնում են

«Ըստ ՀՀ արդարադատության նախարարության նոտարական գրասենյակների ամփոփ տվյալների՝ 1999 թ. ընթացքում հանրապետությունում վաճառվել է 12158 բնակարան եւ առանձնատուն, այդ թվում 8197-ը՝ Երեւան քաղաքում (67,4 տոկոս)»:

Վիճակագրության եւ պետռեգիստրի նախարարությունում ստացած այս տեղեկությանը կցված էր մի փոքր նշում, որտեղ ասվում է, որ 1998 թ. համեմատ 1999-ին նկատվում է անշարժ գույքի պահանջարկի որոշակի անկում, որը հետեւանք է միգրացիոն հոսքի եւ սոցիալ-տնտեսական անկայուն վիճակի:

Թե ինչ կարծանագրի վիճակագրության նախարարությունը 2000 թ. վերջում, դեռ հայտնի չէ: Բայց պահանջարկի չափազանց ցածր ցուցանիշի մասին մեզ հայտնի դարձավ Երեւանի անշարժ գույքի մի քանի գործակալություններ այցելելիս: Տեղեկացնենք նաեւ, որ Երեւանում բնակարանների եւ առանձնատների գները բավականին ցածր են եւ դեռ միտում ունեն ընկնելու:

Թեեւ գործակալությունները պարտավոր չեն արձանագրել անշարժ գույքը վաճառելու դրդապատճառները, սակայն գործի բնույթով նրանց աշխատակիցները քաջատեղյակ էին հիմնական պատճառին՝ սոցիալական ծանր պայմաններ:

Տուն վաճառողների մեծ մասը շարժում է դուրս գալ հանրապետությունից: Մյուս մասը ստիպված է նեղացնել իր պայմանները՝ կենտրոնից տեղափոխվել քաղաքի ծայրամասերը կամ 3 կամ 4 սենյականոց բնակարանը որոշակի գումարի դիմաց փոխանակել 1-ով կամ 2-ով: Գոյություն ունի նաեւ առանց տանիքի մնացած մարդկանց խումբ: Վերջիններս ստիպված են տուն վարձել: Վարձակալությունից օգտվում են նաեւ նորաստեղծ ընտանիքներն, ուսանողները եւ օտարերկրացիները:

Կան կանխատեսումներ, որ շուտով մենք եւս կանցնենք արեւմտյան ապրելաոճին՝ բնակչության ահռելի մասը հանդես կգա վարձակալի դերում:

Օր-օրի անշարժ գույքի գներն ընկնում են:

Դեռի վար սլացող այս ծնե գունդն ասես ոչ ոքի չի հուզում, այնինչ արդեն տագնապի զանգեր հնչեցնելու ժամանակն է, քանզի այս երեւույթը պարզապես սակագների տատանում անվանել հնարավոր չէ:

ԷԼԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

1999 թ. Երեւանում վաճառված բնակարանների եւ առանձնատների պայմանագրային միջին արժեքները (ԱՄՆ դոլարով)

	1 սենյակ	2 սենյակ	3 սենյակ	4 եւ ավելի	առանձնատուն
1-ին եռամսյակ	4376	6142	9197	9241	15876
2-րդ եռամսյակ	4377	6292	8179	9417	14715
3-րդ եռամսյակ	4078	5647	8928	8996	18410
4-րդ եռամսյակ	4084	5824	7772	9642	14461

Իսկ հանցագործների աչքերում զղջում չկար

Շուրջ 2 շաբաթ առաջ բոլորիս ուշադրությունը բեւեռված էր հեռուստաէկրանին տեղեկանալու, թե ինչով ավարտվեց երեք զինծառայողների արյունոտ «ոդիսականը», երբ թմրանյութի եւ ալկոհոլի ազդեցության տակ գտնվող 20-ամյա դասալիքները խլեցին 8 հոգու կյանք: Հաջորդող 2 օրվա ընթացքում իրավապահ մարմիններին հաջողվեց գտնել նրանց ու վնասազերծել: Արդեն սթափված հանցագործները, որոնք ներկայումս ռազմական ոստիկանության հսկողության տակ են, օրերս հեռուստախցիկի ու ձայնագրիչի առջեւ ներկայացրին հուլիսի 13-ի իրենց արկածների մանրամասները: Անտրամաբանական արարքների այդ շղթան, որը հայտնի ողբերգական իրադարձությունների պատճառը դարձավ, իր հիմնավոր նախադրյալներն ունի, սակայն այս մասին ավելի ուշ: Սկզբում վերաբարադրենք պատմությունը...

Երբ մարտաֆիլմերը ոչինչ են իրականության առջեւ ...

ԼՂՀ պաշտպանական շրջանի զորամասերից մեկում ծառայում էին 3 տղաներ՝ Ցոլակ Մելքոնյանը, Արտակ Ալեքյանը եւ Գրիգոր Մադիյանը: Զորամասային կյանքում նրանք, մեղմ ասած, զոհեր չէին, որոնց փախուստի պատճառը կարող էին դառնալ տարբեր կարգի ճնշումներն ու բռնությունը. Ցոլակ Մելքոնյանը զորամասում «հեղինակություն» էր եւ զինծառայությունն անցկացնում էր այլ տղաներին պայմաններ թելադրելով, ոգելից խմիչք ու թմրանյութ օգտագործելով, ընդ որում՝ թմրանյութ նրան մատակարարում էր զորամասի սերժանտներից մեկը: Մադիյանն ու Ալեքյանը, որոնք հանձին իրենց «գաղափարական ոգեշնչողի» եւ հովանավորի՝ զորամասում ամուր հենարան ունեին, վերջինիս վարքագծի ընդօրինակողներն են եղել. Մադիյանը դեռեւս կարճ ժամանակ առաջ 1 տարվա ազատազրկման էր դատապարտվել եւ պատիժը պետի կրեր զինծառայությունից հետո:

Ամենաթողության պայմաններում հայտնված այս եռյակին երեւի սկսում են հիշ թվալ իրենց առավելությունները, որովհետեւ, հիմնականում Մելքոնյանի դրդմամբ, համաձայնության գալիս՝ փող աշխատելու նպատակով Ռուսաստան փախչելու: Իսկ մինչ այդ, ըստ ծրագրի, իրենց կցված ինքնաձիգներով պետք լիներ զորամասը եւ հասնեին երեւան, որ զինված հարձակումների միջոցով գումարներ պետք շորթեին՝ իրենց զորացման հարցերը լուծելու եւ հանրապետությունը լքելու նպատակով: Փախուստի ծրագրի մասին տեղյակ է եղել զորամասի սերժանտներից մեկը, որը, Մելքոնյանի ահաբեկումներից վախենալով, հրամանատարությանը տեղյակ է պահել եռյակի դասալքությունից 5 ժամ անց միայն:

Ազատության մեջ հայտնված դասալիքներն այդ ընթացքում իջնում են Ջալիք գյուղ՝ ավտոմեքենա գտնելու: Տեղաբնակներից մեկն առաջարկում է իր ծառայությունները՝ սեփական ավտոմեքենայով նրանց տեղ հասցնելու դիմաց պահանջելով 10 հազար դրամ: Ցոլակ Մելքոնյանը համաձայնում է, առա այդ տեղաբնակին պատկանող խանութից գնում է զգալի քանակությամբ խմիչք: Դասալքության նախորդ գիշերը զորամասի մի սպայի հետ հարբեցողությամբ զբաղված եւ թմրանյութի ազդեցության տակ գտնվող Մելքոնյանի՝ առանց այդ էլ բորբոքված վարքագծի վրա պարզ է, թե ինչպես պիտի անդրադառնար լրացուցիչ խմիչքը, այն էլ՝ գարեջուրը: Ավտոմեքենայի տիրոջն ու նրան ուղեկցող համագյուղացուն հավատացնելով, թե իրենք մեկնում են զորամասի հրաձգարան՝ դասալիքները ճանապարհին խնում են եղած գարեջուրը:

Արդեն «համապատասխան» վիճակում գտնվող Ցոլակ Մելքոնյանն արագ որոշում է ընդունում՝ սպանել գյուղացիներին ու յուրացնել մեքենան: Նա մի պատրվակով կանգնեցնել է տալիս ավտոմեքենան, ապա, ընկերների հետ առանձնանալով, նրանցից պահանջում է իրականացնել սպանությունները: Սակայն ճանի որ նրանք հրաժարվում են, ինքն է սպանում:

Դիակները գցելով մերձակա ձորը՝ նրանք ուղղություն են վերցնում դեպի Վարդենիս: Հետաքրքիր է, սակայն, որ հարբած Ցոլակ Մելքոնյանն ինքն է վարել ավտոմեքենան, իսկ հանդիպակաց պահակակետն անցնելու համար նույնիսկ խորամանկություն բանեցրել. սուզվող մի մեքենայի հետ մեկտեղ՝ նրանք աննկատ անցել են պահակակետը, թերեւս նաեւ զինվորական համազգեստն է ափոթության մատնել պահակին... Այնուամենայնիվ, վտանգավոր արագությամբ սլացող նրանց ավտոմեքենան ավելի ուշ գրավել է երկու գծային տեսուչների ուշադրությունը, եւ դասալիքները սկսել են հետապնդվել: Հետապնդման ժամանակ Մելքոնյանը կորցնում է մեքենայի կառավարումն ու բախվելով մոտակա ժայռին՝ կանգ առնում: Ավտոմեքենայից դուրս եկած երկու ընկերները նրա պահանջով դիմահար կրակ են բացում տեսուչների մեքենայի վրա ու, չնայած վերջիններիս հանձնվելու փորձերին, Մելքոնյանը գնդակահարում է նրանց:

Վքարված ավտոմեքենան դասալիքներին «սիրում» է որոգայթ լարել ճանապարհով անցնող առաջին իսկ փոխադրամիջոցի դեմ: Նրանք կրակահերթով կանգնեցնում են անցնող «Նիվա» ավտոմեքենան, եւ Ցոլակ Մելքոնյանը կրկին ինքն է հանձն առնում սպանությունների դժվարին «գործը»՝ մեքենայի բաց պատուհանից գնդակահարելով բոլոր ուղեւորներին, այդ թվում՝ 5-6 տարեկան երեխային: Սակայն նրանց չի հաջողվում եղած մեքենաներից եւ ոչ մեկը սարին վիճակի բերել, ոտքով են ճանապարհ ընկնում դեպի սարերը: Ըստ երեւույթին այդ պահից են նրանք սկսում գիտակցել, որ ծրագրերը վերջնականապես ձախողված են, եւ օրակն իրենց ուրջը սեղմվում է: Մելքոնյանն առաջին հերթին է գիտակցում, որ ամենամեծ հանցավորությունն իրենն է, եւ ինքնասպանության անհաջող փորձ կատարում: Ընկերները մտածելով, թե նա մեռած է, թողնում են զենքերն ու փախչում: Առանց պարագլխի նրանց թափառումները երկար չեն տեւում: Շուտով ձերբակալվում են դրանով իսկ, փաստորեն, փրկվելով նրանցից, ովքեր փնտրում էին իրենց՝ ինքնադատաստան տեսնելու...

Ի՞նչն է ծնունդ ու սնունդ տալիս առագա հանցագործին

Մեզ պարբերաբար հավաստիացնում են, թե հանրապետությունում նվազել է հանցագործությունների թիվը: Եթե անգամ այդպես է, ապա միչ է մխիթարում, ճանի որ հանցագործությունները աչի են ընկնում աննախադեպ ծանրությամբ՝ մեկ խորհրդարանում են կառավարական անձանց ու պաշտոնյաների գնդակահարում, մեկ ինչ-որ ճաղատում մի ողջ բազմանդամ ընտանիք են գազանաբար ոչնչացնում, մեկ էլ զինծառայողներ են դասալքում՝ անարգել սպանելով ութ հոգու: Վայրագության այսօրինակ դրսեւորումները պատահաբար ու մի ակնթարթում չեն ի հայտ եկել հանցագործների մեջ. յուրաքանչյուր ոճրագործություն ունի իր հոգեբանական նախապատմությունը:

Այդ հանցագործությունները մի կողմ թողնելով՝ դիտարկենք մեր շարադրած պատմությունը: Ցոլակ Մելքոնյանի, ինչպես նաեւ՝ նրա բուլամորթ ուղեկիցների պես տղաները հենց այնպես չեն հանցագործ դառնում: Նրանց այդպիսին է դարձնում ընտանիքը, ուր չեն ստանում դաստիարակություն, կամ էլ տանը ներշնչվում են այնպիսի «ճշմարտություններով», որոնք ողջ հետագա կյանքի համար այլասերում են նրանց բանականությունը: Նրանց այդպիսին է դարձնում դպրոցը, որը վերջին տարիներին դպրոցահասակ սերնդի համար դադարել է որեւէ իմաստ, արժեք ու հեղինակություն ներկայացնելուց. եւ այստեղ մեղքն առաջին հերթին դպրոցներինն է, որի հարկի տակ «ապաստանած» մանկավարժների առնվազն 80 տոկոսը չի գիտակցում իր՝ այդտեղ գտնվելու իմաստը, դերի կարեւորությունը: Արդյունքում «բողարկվում» է կիսագրագետ մի սերունդ, որի առավել հաջող հատվածը (վերապահումով ասած) ստանում է բարձրագույն կրթություն, մյուսներն էլ այդ ընթացքում զբաղվում են փող աշխատելով: Բնականաբար, երբ տարբեր կրթություն ու դաստիարակություն ստացած, տարբեր խավերից դուրս եկած տղաները հայտնվում են զորամասում, նույն հարկի տակ բախումներն ու արկածներն անխուսափելի են դառնում. յուրաքանչյուրը թելադրում է իր օրենքները:

Սակայն տվյալ դեպքում արատավորության արմատը նաեւ զորամասում է թաքնված: Փաստերի շարադրանքից արդեն իսկ պարզ է, որ զորամասում (եւ ոչ միայն այդ մեկում) հրամանատարության անտարբերության ու կաշառվածության «շնորհիվ» ամենաթողության մթնոլորտն է տիրել: Ցոլակ Մելքոնյանը, լինելով ժամկետային զինծառայող, բացարձակապես հաշվի չի առել զորամասի ղեկավարությանը եւ թելադրել իր «ճշմարտությունը»: Փախուստին նախորդող գիշերը նա հարբեցողությամբ է զբաղվել մի սպայի հետ, եղել է դեպքի, երբ թմրանյութ է փոխանցել իրենց դասակի հրամանատարին, այդ թմրանյութը, ինչպես արդեն նշել ենք, նրան էր մատակարարում մի սերժանտ, մեկ այլ սերժանտ տեղյակ է եղել նրա փախուստի ծրագրերին, սակայն՝ նախապես չի հայտնել հրամանատարությանը: Իսկ չէ՞ որ սրանք փաստեր են՝ միայն մեկ մասնավոր պատմությանն ու մեկ զինծառայողին առնչվող. պատկերացրեք, թե նմանօրինակ որքա՞ն փաստեր են կուտակված յուրաքանչյուր զորամասում: Քանի դեռ մեր զորամասերից գոնե մեկում «վխտում» է անպատժելիությունը, նման պատմություններից ապահովագրված չենք: Եվս մի փաստ. Մելքոնյանը այդպես համարձակորեն չէր դասալքի, եթե գոնե ինչ-որ վստահություն չունենար, որ, ըստ իր ծրագրի, երեւանում համապատասխան գումարով «կարգավորելու» է ընկերների եւ իր զորացման հարցերը: Այնպես որ, բոլոր այս փաստերը նախադրյալներ են, որոնք հանգեցրին ողբերգության:

Այդ շաբաթ զոհված ավտոտեսուչներից մեկի հարսանիքն էր լինելու. հուլիսի 13-ին նրա մեքենայում նաեւ հարսանիքի համար նախատեսված գնումներն էին... որոնք «ծառայեցին» նրա թաղմանը: Զոհվեց վեցամյա երեխան... Իսկ հանցագործների աչքերում զղջում չնկատեցինք: Երբ ռազմական ոստիկանության օպերատորը տեսախցիկն ուղղեց Ցոլակ Մելքոնյանի դեմքին, նա նույնիսկ աշխուժացավ. «Ապեր, էս ե՞րբ եք ցույց տալու... իմանամ... նայեմ...»:

ԱՆՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Աղանդավորները Սիսիանում պառակտում, խայխայում են հայ օջախները

Սուրբ Հովհաննես եկեղեցու Տեր Նարեկ քահանան Հայաստանի Եվրախորհրդին անդամակցելու լուրն ընդունել է կսկիծով, տագնապով

Սյունյաց Օրբելյան պատմիչի վկայությամբ, Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունով եկեղեցին կառուցվել է 6-րդ դարի երկրորդ կեսին, ենթադրաբար մինչեւ 584 թվականը: Պատմական փաստերը վկայում են, որ եղել է Սյունյաց աշխարհի հոգեւոր կենտրոնը: Շուրջ 200 տարի առաջ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին վերանվանվել է Սուրբ Հովհաննես:

Խորհրդային տարիներին հայաստանյան եկեղեցիները կամ քանդվում, կամ վերածվում էին պահեստի. Սուրբ Հովհաննեսը նախ եղել է բրդի, ապա ցորենի պահեստ: Արդեն մեր դարի 50-60-ական թթ. սկսվել են եկեղեցու վերանորոգման աշխատանքները. տակավին Լենկ Թեմուրի արշավանքներից կիսավեր եկեղեցին վերանորոգվեց եւ 1979-ից սկսեց գործել. ամիսը, տարին մեկ քահանա էր եկել, քարոզել տեղի հավատացյալ ժողովրդին, երկու տարի անց՝ 1981-ին նշանակվել է հովիվ, սակայն պարբերաբար ծիսակարգ չի կատարվել: 1989-ին վերականգնվեց հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմը. Սուրբ Հովհաննեսը վերածնունդ ապրեց, սկսվեց հոգեւոր զարթոնքի ժամանակաշրջանը: Ամեն կիրակի եւ սուրբ տոներին մատուցվում է պատարագ 24 հոգանոց երգչախմբի մասնակցությամբ: Յուրաքանչյուր շաբաթ եւ կիրակի կատարվում են ժամերգություններ, երեկոյան ժամերգություն, իսկ կիրակի նաեւ քարոզ: Եկեղեցին ունի կից կիրակնօրյա դպրոց, որտեղ սովորել են 250 աշակերտներ: «Մեր հիմնական նպատակը հայ երեխային դրսի ոչ հայեցի շրջապատից կտրելն է, հայեցի դաստիարակելը: Սովորեցնում ենք կրոն, կրոնական երգեր: Մեր կիրակնօրյա դպրոցի եւ երգչախմբի հինգ աշակերտներ ուսանում են Երուսաղեմի վարժարանում», պատմում է Սուրբ Հովհաննեսի Տեր Նարեկ քահանա Ամիրյանը:

Սիսիանի շրջանում թեեւ փակվել էին հայ առաքելական եկեղեցիներ, բայց ասել, թե ժողովուրդը կտրվել էր հավատից, սխալված կլինենք: Հավատավոր հայերը հասնում էին Խոր Վիրապ, Գեղարդ, Մայր աթոռ, գնում էին մկրտության: Ճիշտ է, ժողովուրդը չգիտի եկեղեցական ծիսական օրենքները, բայց մնացել է ավանդապաշտ: «Եթե Սիսիանում եւ շրջակա գյուղերում տասը հարսանիք կա, ապա ինն անցնում է եկեղեցով: Մարդիկ եկեղեցուն նվիրվածությամբ, անկեղծությամբ, հավատով են վերաբերվում», ասում է Տեր Նարեկ քահանան:

Աղանդավորությունը Սիսիանի շրջանում մուտք է գործել 30-ական թթ. սկզբներին: Եկեղեցին, երբեմն նաեւ ուժի գործադրմամբ կարողացել է արմատախիլ անել կրիշնայական աղանդը: Սրա մարդասիրությամբ եւ հոգեորությամբ ակտիվ աշխատանքներ ծավալեցին շաբաթականները ու հոգեգալստականները: Վերջերս Սիսիան ներխուժեցին սատանայի ամենամեծ ծառաները «Եհովայի վկաներ» չար աղանդի ներկայացուցիչները: Ըստ էության, Սուրբ Հովհաննես եկեղեցին քրիստոնեական քարոզչությունը թողած, զբաղվում է աղանդավորների դեմ հակաքարոզչությամբ. տեղական ռադիոյով, թերթով, կենդանի քարոզչությամբ փորձ է արվում հատկապես «Եհովայի վկաների» արշավանքի դեմն առնել: Երբեմն արդյունք: «Վկաների» թիվն օր-օրի ավելանում է:

Քրիստոնյա Հայաստանի 1700-ամյա պատմության ընթացքում 20-ից ավելի աղանդներ չեն եղել, մինչդեռ վերջին տասը տարիներին դրանք մի քանի անգամ շատացել են: Մայր աթոռն անլուր հետեւում է Հայաստան այցելող աղանդավորական շարժումների մեծահարուստ լիդերներին, մոռմոնները բացահայտորեն հովանավորում են երկրի մի քանի կուսակցությունների, «Մայր հայրենիք» հեռուստաընկերությունը վերածվել է ավետարանչականների խոսափողի: Հայաստանը 1700 տարի առաջ քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն, 1700 տարի հայ ժողովուրդը դավանել է Առաքելական եկեղեցու պատվիրաններ, եւ Առաքելական եկեղեցու դավանանքից ցանկացած շեղում մեզ համար աղանդ է, յուրաքանչյուր աղանդ հետապնդում է քաղաքական նպատակներ, յուրաքանչյուր աղանդի փիլիսոփայությունն մեզ համար անընդունելի է, քանզի հետապնդում է քաղաքական նպատակներ:

Տեր Նարեկ քահանայի համոզմամբ, դրսի ուժերին ձեռնտու չէ Հայաստանի, հայերի միավորումը, իսկ կրոնն այն ուժն է, որ ազգը միասնական է պահում: Ո՞վ է ֆինանսավորում աղանդավորներին. քահանան չի կարող ասել, սակայն. «1994-ին, երբ մեր եւ կրիշնայականների ընդհարում եղավ, մենք պարզեցինք, որ նրանք ֆինանսավորվում են հարեւան Նախիջեւանից: Մնացածներին չգիտեմ, բայց կարող եմ ասել, ֆինանսավորվում են դրսից: Աղանդավորական ցանկացած շարժում կապ չունի հոգեւորի հետ»: Տեր Նարեկի ասելով, աղանդավորությունը լայն տարածում է գտել Ադրբեջանից մազապուրծ եւ Սիսիանի շրջանում հաստատված բռնագաղթածների շրջանում. «Գուցե պատճառն այն է, որ նրանք հայկական միջավայրից հեռու էին, հեռու էին ազգային հոգեբանությունից: Սիսիանում «Եհովայի վկաներ» աղանդ քարոզող երկու երիտասարդները Սումգայիթից են: Գուցե պատճառն այն է, որ փախստականները դրամական, նյութական միջոցներ ստանալու առավել կարիք ունեն»:

«Եհովայի վկաները» պառակտում, խայխայում են հայ օջախները: Ինչպե՞ս: Լսենք Տեր Նարեկին. «Նրանք կույր հավատացյալներ են, ֆանատիկոսներ: Եթե ամուսինը եհովայական է, նրանից պահանջում են ընտանիքի բոլոր անդամներին «դարձի բերել»: Ընդդիմացող կինը, երեխան երկընտրանքի առաջ կանգնելով, սրտիկած են հեռանալ ընտանիքից: Այսպես պառակտվում են հայ ընտանիքներ»:

Հայաստանի Եվրախորհրդին անդամակցելու լուրը Տեր Նարեկն ընդունել է տագնապով. «Հայաստանը դառնում է ԵՄ-ի անդամ, եւ ԵՄ-ն իր օրենքները փաթաթում է մեր վզին: Այսօր արդեն «Եհովայի վկաները» ասում են, թե մենք բռնանում ենք, անտեսում խղճի ազատությունը: ԵՄ-ն փորձում է մեզ համոզել, որ համասեռամոլությունը աննորմալ երեւույթ չէ: Սա ազգակործան ծրագիր է: Երբ Ստրասբուրգում մեր պատվիրակության անդամները ծափահարում էին, ես չէի հասկանում ցնծության իմաստը: Միանգամայն ուրախ չեմ եղել Հայաստանի՝ ԵՄ-ի մուտքով: Սա ասում եմ որպես սովորական հայ մարդ: Սա մեր թշնամու սարքած բանն է, թշնամու ցանած սերմերն են մեր պարարտ արտի մեջ: Աղոթենք Աստծուն, որ Եվրոպան մեր վզին չփաթաթի մեզ համար անընդունելի իր բարքերը»:

ԹԱԹՈՒԼ ՀԱՍՈՒԲՅԱՆ

Սիսիան-Երեւան

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ժողովրդավարությունը բռնության օղակից դուրս բերելու մտահոգությամբ

Հուլիսի 25-ին Թեթեյան կենտրոնում տեղի ունեցավ «Բռնությունը եւ ժողովրդավարության գործընթացը» թեմայով կլոր սեղան, որը կազմակերպել էր «Ազգ» օրաթերթը Հայաստանում Գերմանիայի դեսպանության օժանդակությամբ: Երեկվա մեր թերթում հրանցիկ անդրադառնալով «Կլոր սեղանին», խոստացել էինք այսօր առավել մանրամասն ներկայացնել այն, ինչ եւ մատուցում ենք ստորեւ:

«Եթե դիտարկենք պատմական փաստերը, ժողովրդավարական հասարակարգում նույնպես լինում են բռնություններ: Գիտնականները փորձում են գտնել դրանց պատճառները, հեղինակում բազմաթիվ տեսություններ, բացատրություններ, որոնցից շատերը փաստում են, թե ժողովրդավարություններում ավելի խաղաղասեր են, բայց անհատի մակարդակում դա չի ընդգծվում: «Հոկտեմբեր 27-ի եւ մարտի 22-ի ազդեցությունը Հայաստանի միջազգային կերպարի վրա» զեկուցման սկզբում այսպես ասաց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը. «Երբ հոկտեմբեր 27-ի դեպքերը տեղի ունեցան, ներկա չէի: Առաջին բանը, որ անցավ մտքովս՝ ո՞նց ենք աշխարհին բացատրելու կատարվածը: Առաջինն, իհարկե, բնազդային պատճառաբանությունն էր՝ օտար պետություններում էլ կատարվում են Ռաբինի, Գանդիի, Քենեդու սպանությունները: Մեր պարագայում ընկալումը տարբեր է, ասաց ՀՀ արտգործնախարարը՝ հոկտեմբեր 27-ից հետո ընկած ժամանակահատվածը երեք փուլի բաժանելով: Սկզբում աշխարհը մեզ ընկալեց համակրանքակարեկցանքով, այնուհետեւ՝ երրորդ աշխարհի, բանանային երկրի տպավորություն ստեղծվեց: Երկրորդ փուլը (ահաբեկիչների ձերբակալումից մինչեւ վարչապետի նշանակում) լի էր անորոշությամբ: Միջազգային արտաքին քաղաքականության համար ամենադժվարն այս փուլն էր: Երրորդ՝ կայունության փուլը, սկսվեց Անդրանիկ Մարգարյանի նշանակմամբ: Արտաքին աշխարհի հետ տարբեր թելերով կապված Հայաստանը շատ տուժեց. քաղաքական տեսանկյունից տուժեց ԼՂՀ հակամարտությունը: Տնտեսական ներդրումների իմաստով զարգացում չեղավ: Հայաստան-Սփյուռք հարաբերությունները գրանցեցին որոշակի սառեցման փուլ, արձանագրեց Վարդան Օսկանյանը: Սակայն ավելի ուշ, աշխարհը համոզվեց, որ մեր ժողովրդավարության հիմքերը շատ ամուր են, գործում ենք Սահմանադրության շրջանակներում: Սա շեշտվում է արտաքին աշխարհի պետությունների ղեկավարների կողմից»:

Ընդհանրապես բոլոր զեկուցումներից հետո նիստերը վարող ՍՊ նախագահ Գագիկ Հարությունյանը դրանց ավելի ամփոփ տեսք էր հաղորդում, ընդգծում առավել կարեւոր մտքերը, շարադրում իր կարծիքը: Հոկտեմբեր 27-ի մասին խոսելով, նա այն սոցիալական երկրաշարժի հետ համեմատեց, շեշտելով նաեւ, թե ի տարբերություն ՀՀ արտգործնախարարի, ինքն այն երեք փուլերի մեջ չէր տեղավորի «Երեւույթը շատ խորն է, բազմանիստ ուսումնասիրության անհրաժեշտություն ունի: Նորմալ պետությունները աշխատում են հակակայլեր ձեռնարկելու ուղղությամբ, իսկ մենք մեր ուժերն ուղղում ենք հետեւանքները գնահատելուն»:

ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան կանգ առավ դեմոկրատական հասարակարգում բռնության դրսեւորմանը եւ նշեց, թե խնդրո առարկան անհատի կամ խմբավորման օրենսդրական շրջանակներից դուրս գործունեությունն է, որի ընթացքում կամ մարդկային զոհեր, կամ նյութական վնասներ են լինում, եւ հասարակության մնացած մասի համար ստեղծվում են անտանելի պայմաններ: Դեսպանն այնուհետեւ ներկայացրեց աշխարհում առկա բռնության որոշ տեսակներ, երբ որոշակի խումբ հասարակությանը պարտադրում է իր տեսանկյունը, երբ ահաբեկչություն է իրականացվում: Զեկուցողը կանգ առավ 70-80-ականներին Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում բասկերի, իռլանդական բանակի վարքագծին: Պարոն Լեգրան խոսեց նաեւ վերջին շրջանում մարզական մեծ իրադարձությունների ժամանակ տեղի ունեցող բռնությունների մասին, եզրակացնելով, թե բռնության դեմ պայքարել հնարավոր է միայն միջազգային համագործակցությամբ: Նշեց իր երկրի եւ Գերմանիայի օրինակը երբեմնի ախոյաններն այսօր դաշնակից բարեկամներ են:

Կլոր սեղանի շրջանակներում փորձ-ինչ անակնկալ էր լսել «Փողերի լվացումը եւ Հայաստանում դրա օրենսդրական կարգավորման խնդիրները» վերնագրով զեկուցումը (այսքան մանրակաղաքար մեր թեմաներով հանկարծ կապվում ենք աշխարհում լուրջ հնչեղություն ունեցող խնդիրներին): ՀՀ Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության օրենսդրության զարգացման բաժնի պետ Վարուժան Ավետիսյանը բավականաչափ հստակ խոսեց խնդրի մասին: «Ուշագրավ է այն փաստը, որ վերջին հնգամյակում փողերի լվացում իրականացնող մի շարք հանցագործ կառույցներ եւ անձինք անօրինական ճանապարհներով ձեռք բերված դրամական միջոցներն ուղղում են դեպի լայնածավալ հոսքերով պետական պարտատոմսերի շուկա՝ անհարիր դարձնելով պարզել միջոցների ծագումը, հետագա շրջանառության ուղղությունները: Եվ ստացվում է, որ պետությունը տոկոսադրույքների քաղաքականություն իրականացնելիս որոշ չափով օգտագործում է նաեւ անօրինական միջոցներ»: Ուսումնասիրելով Հայաստանում ձեւավորված տնտեսական եւ հասարակական դաշտը, դրանք համեմատության մեջ դնելով փողերի լվացմամբ զբաղվող մասնագիտական անձանց գործողությունների հետ, բանախոսը եզրակացրեց, թե Հայաստանն ունի փողերի լվացման «շուկա» ձեւավորելու բավական ռեալ պոտենցիալ: ՀՀ-ում առայժմ չի գործում փողերի լվացումը կանխարգելող պատժող կամ թեկուզ որոշ չափով սահմանափակող օրենսդրություն եւ միջոցառումների հստակ ծրագիր: Երկրում ընթացող ժողովրդավարական գործընթացներին զուգահեռ, անհրաժեշտ է նկատի առնել հնարավոր վտանգները, գնահատել երկրի բարի համբավը եւ խնդրին տալ օրենսդրական լուրջ լուծում»:

Խիստ օրինաչափ էր Վլադիմիր Նազարյանի զեկուցումն ամենաստպասվածը եղավ: «Ժողովրդավարական պետությունում հարկադրանքի կիրառման օրենսդրական հիմքերը» վերնագրով զեկուցման մեջ ՀՀ ԱԺ իրավաբանական վարչության պետը նշեց, թե մարդու իրավունքներին եւ ազատություններին վերաբերող սահմանադրական դրույթները հանրապետության հիմնական օրենքի առանցքն են կազմում, եւ հակասություն կա մի կողմից մարդու իրավունքներին եւ ազատություններին վերաբերող սահմանադրական դրույթների եւ մյուս կողմից՝ Սահմանադրության մնացած հոդվածների բովանդակության միջեւ: Պետք է փոփոխվեն մնացած հոդվածներում ամրագրված դրույթները՝ դրանք համապատասխանեցնելով մարդու իրավունքներին վերաբերող նորմերին: Պարոն Նազարյանը փաստեց, թե հանրապետությունում գոյություն չունի միջազգային չափանիշներին համապատասխանող որեւէ իրավաբանական կենտրոն կամ ինստիտուտ, որն ի զորու է մշակել եւ հանրապետության ղեկավար մարմիններին ներկայացնել հանրապետության օրենսդրության զարգացման հայեցակարգը եւ այն օրենքների նվազագույն ցանկը, ինչպես նաեւ ունակ լինել նույն միջազգային ստանդարտներին համապատասխան մշակել օրենքների նախագծեր, առանց որոնց անհնար է քաղաքացիական հասարակության եւ ժողովրդավարական պետության գոյությունը:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետի դեկան Ռուբեն Միրզախանյանի խոսքը մի փոքր ալիք ստեղծեց: Խոսելով բռնության դեմ պայքարում կրթության եւ մշակույթի դերի մասին, պարոն Միրզախանյանը վիճակագրական տվյալներով ցույց տվեց, թե մանկապարտեզը դարձել է մոռացված հասկացություն՝ դրանց թիվը վերջին տարիներին կրճատվել է 30 տոկոսով, պակասել է նախադպրոցականների թիվը, 1990-98-ին Հայաստանում դադարել է գոյություն ունենալ 142 գրադարան: Թանգարանների թիվը 400-ից նվազել է 110-ի: Ի տարբերություն սրանց, աճել է բուհերի թիվը՝ 17 պետականի կողքին 90 ոչ պետական բուհ: «Զավեշտալի իրավիճակ է, երբ որակական անկում ապրած միջնակարգ դպրոցի շրջանավարտները դառնում են տարբեր համալսարանների ուսանողներ՝ հիմնականում «մոդայիկ» մասնագիտությունների գծով: Պարոն Միրզախանյանը խոսեց Հայ առաքելական եկեղեցու դերի, բռնություն իրականացնող աղանդների մասին, սակայն լսարանի համար ինքնարկման առարկա դարձավ նրա՝ լեզվի մասին արված դիտարկումը: «Լեզվի մասին օրենքն արձանագրեց, թե լեզվի ընտրությունը, որով պետք է սովորի երեխան, որոշում է ոչ թե ծնողը, ինչը ելնում է մարդու իրավունքներից, այլ պետությունը: Փակվեցին ռուսական դպրոցները, այսինքն եղավ մարդու իրավունքների հռչակագրին հակասող մի երեւույթ, որի հետեւանքով այսօր սերունդը ռուսերեն չգիտի, չի կարդում, չի ծանոթանում թարգմանված գրականությանը», ասաց պրն Միրզախանյանը: Այս մտահոգությունը շարունակեցին այլ բանախոսներ էլ, բայց ներկաներից մեկը, որ վստահաբար ընդհանրացնում էր լսարանի մի մասի կարծիքը, ընդգծեց այն միտքը, թե լեզվի օրենքը «կեղծ հայրենասիրական» որակելը սխալ է: Ըստ նրան, այն կոչված էր պահպանելու բավականաչափ անոթաբտության մեր մայրենի լեզուն:

Արտգործնախարարը ելույթի պահին:

Ռ. Միրզախանյան

ՀՀ Ազգային ակադեմիայի սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն Գեւորգ Պողոսյանը խոսեց տասը տարվա սանդղակն օրինակ առնելով: «Մեր բազմաթիվ հարցումները ցույց են տվել, թե Հայաստանում ժողովրդավարության առաջին արժեքները հետեւանքներ ունեցան խոսքի, մամուլի ազատություն, բազմակուսակցականություն, շուկայական հարաբերություններ: Ղազախստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի հետ համեմատած 1989-91 թթ. դրանք մեզանում առավել հետեւողականորեն ընկալվեցին: Թեեւ պարոն Պողոսյանը նշեց, թե «մենք չափազանց հեռու ենք արեւմտյան երկրների պատկերացմանը հասնելու, որն է անմիջական մասնակցություն որոշումների ընդունմանը»: «Ժողովրդավարական գիտակցության էվոլյուցիան» թեմայով զեկուցման մեջ պարոն Պողոսյանը հաղորդեց, թե հետազայում մարդկանց սպասելիքները չարդարացան, հասարակության ծանր վիճակը, իշխանությունների թուլացումը, զանգվածային աղքատացումը, հանցագործությունների աճը նույնացվեցին ժողովրդավարական արժեքների հետ: Այս շարքում որտե՞ղ է բռնությունը, հարցրեց բանախոսը: Բռնությունը, որպես երեւույթ, ընդգրկվում է ժողովրդավարության մասին պատկերացման մեջ: 27-ի դեպքը 27-ից չի սկսվել, այլ 90-ականների սկզբից, երբ հայտնի եւ անհայտ գործիչների հանդեմ բռնություններ կիրառվեցին: Գնահատելով բռնությունն իբրեւ ծայրահեղ բացասական երեւույթ, բնակչության որոշ հատված այսօր դա գնահատում է իբրեւ դրական երեւույթ, ի պատասխան իրենց ծայրահեղ վիճակին: Սա թյուր ընկալում է, բայց այսօր գոյություն ունի, ասաց պարոն Պողոսյանը:

Թեեւ Թեթեյան կենտրոնի դահլիճը զովացվում էր, բայց լուրջ թեմայի շուրջ հումորով կոտրող լրագրող Վալերի Այդինյանի խոսքը թարմացրեց բոլորին: Ժամը 11-6.30-ը տեւած բանախոսություն-քննարկումների վերջում դրա անհրաժեշտությունը խորապես զգացվում էր: «Ցավում եմ, որ այսքան բարի մարդիկ հավաքված խոսում են բռնության մասին, սկսեց պարոն Այդինյանն, իր զեկուցումը վերնագրելով «Բռնությունը եւ հայաստանյան նոր մամուլի կայացումը»: Բավականաչափ հետաքրքիր նրա դիտարկումները սփռված ենք առավելագույնս համառոտել: Պարոն Այդինյանը «Մամուլը եւ բռնությունը» թեման բաժանեց երեք մասի՝ մամուլը որպես բռնության միջոց եւ գործիք, մամուլը որպես բռնության օբյեկտ, բռնությունը որպես մամուլի հիմնական թեմաներից մեկը: Հայ մամուլն՝ իր արմատներով գնում է դեպի խորհրդային համակարգ, որ սկսվել եւ հարատեւում էր բռնությամբ: Հետաքրքիր էր պարոն Այդինյանի հիշեցրած օրինակներից մեկը: Այն հարցին, թե ինչ ընդհանուր բան կա շրջկոմի քարտուղարի եւ ճանճի միջեւ, հայկական ռադիոն պատասխանում էր. «Երկուսին էլ կարելի է սպանել թերթով»: Լրագրողը ներկայացրեց այն անբարենպաստ մթնոլորտը, որտեղ հայոց նոր մամուլն է ծեւավորվում ու կայանում: «Օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով լրատվական այսօրվա միջոցները մոռանում են պրոֆեսիոնալ էթիկայի տարրական կանոնները, յուրացնում դեղին մամուլի զինանոցը, գովաբանում յուրայիններին: Մեծ հաճույքով ծախու գրչակների բանակը ոչնչացնում է թշնամիներին: Նրանց հոգեբանությունը ոչնչով չի տարբերվում վարձու մարդասպանների՝ ֆիլերների հոգեբանությունից: Մամուլի պատկերն այսօրվա կտրվածքով կարող է մռայլ թվալ, նկատեց պարոն Այդինյանը, բայց ժամանակը տեղում չի մնում: Ու ճշմարտությունն այն է, որ որոշ առաջընթաց կա»:

Զեկուցումներին առնչվող բավական լուրջ ու հետաքրքիր հարցեր էլ հնչեցին, որոնց անդրադարձ կլինի երեւի թե մեկ ուրիշ առիթով:

ԱՆԱՏԻՍ ՀՈՎՀԱՆԵՓՅԱՆ

Ձախից աջ՝ Միշել Լեգրա, Ֆոլկեր Ձայց, Վարդան Օսկանյան, Գագիկ Հարությունյան եւ Վլադիմիր Նազարյան

Մշակույթ

Եկել ու ասում են. լսենք նրանց

Ծաղրանկարների ցուցահանդես Թեհեյան կենտրոնում

Երգիծանկարչությունը մեր ժուռնալիստիկայում չգիտես ինչու, այսպես ասած, «օժանդակ գործոն» է դարձել: Շատ ու շատ շնորհալի կամ տաղանդավոր նկարիչներ ստիպված դարձել են լրագրերի հոդվածներին ուղեկցող նկարազարդումների հեղինակներ, երբ կարող էին առանձին, անհատական ցուցահանդեսներ կազմակերպել: Ու հազվադեպ առիթներ են լինում, երբ երգիծանկարիչը ալբոմ է ստեղծում կամ անհատական ցուցահանդես կազմակերպում:

Այդպիսի բացառիկ առիթ է ներկայացել հայ յոթ նկարիչների համար, ովքեր ներկայացրել են իրենց ծաղրանկարները Թեհեյան մշակութային կենտրոնում հրավիրված «Կլոր սեղանի» ժամանակ («Բոնությունը եւ ժողովրդավարության գործընթացը» թեմայով) «Արամ եւ Գոհար Խաչատուրյաններ» ցուցասրահում ցուցադրվում են Վլադիմիր Աբրոյանի, Ագնեսայի, Արզոյի, Գեորգի Յարալյանի, Նիկոյի, ToTo-ի, Դավիթի երգիծանկարները: Այս մարդկանց անունները հայտնի են հայրենական եւ արտասահմանյան մամուլից, նրանցից ոմանց աշխատանքներն արժանացել են միջազգային մրցանակների եւ դիպլոմների: Եվ որքան էլ զարմանալի է, նրանց նվաճած մրցանակների ու դիպլոմների թվում հայրենական մրցանակներ չկան: **«Ազգ»** թերթի նախաձեռնությամբ բացված այս ցուցահանդեսում ներկայացված են նաեւ, օրինակ, Վլադիմիր Աբրոյանի այն երկու նկարները, որոնք արժանացել են միջազգային մրցանակների եւ զետեղված են միջազգային կայքերում:

Գեորգի Յարալյան. «Իմ ընկերները»:

Ցուցահանդեսի տեսակետ

Toto-ի նկարաշարը

– Այս ցուցահանդեսն անչափ կարեւոր է մեզ համար, ասաց մասնակիցներից Սուքիաս Թորոսյանը (Toto),- սակայն կուզենայի, որ ցուցադրվեին նաեւ մեր գործընկերներ Ցոլակ Դանիելյանի եւ Սամվել Աբգարյանի (Ա. Բ. Գ.) նկարները, որովհետեւ այսպիսի առիթ առաջին անգամ է մեզ ընձեռվել:

– Այս ցուցահանդեսի ժամանակ ես առաջին անգամ մոտիկից ծանոթացա իմ գործընկերներից Ագնեսային եւ Արզոյին, թեեւ նրանց աշխատանքներին վաղուց էի ծանոթ, ասաց Դավիթը (Դավիթ Դազանջյան): Կարծում եմ, որ այսպիսի ցուցահանդեսները եւ այսպիսի հանդիպումները շատ բան են տալիս ստեղծագործողին:

Ցուցահանդեսի կայացման փաստն ինքնին բարձր է գնահատում հայ երգիծանկարչության նահապետներից մեկը՝ Գեորգի Յարալյանը, որը սիրով է խոսում իր երիտասարդ գործընկերների աշխատանքների մասին: Ինքը՝ Գեորգի Յարալյանը Հայաստանում վերջին անգամ ցուցադրվել է 1996 թվականին (ընդամենը 2 նկարով), իսկ արտասահմանում (Սիրիա)՝ 1993-ին:

– Ես իսկապես ուրախ եմ այս ցուցահանդեսի համար, ասաց Գեորգի Յարալյանը: Նկարչի համար ամեն մի ցուցադրություն իսկապես տոն է: Իսկ այս ցուցահանդեսը կրկնակի տոն է ինձ համար, որովհետեւ կազմակերպվել է **«Ազգ»** թերթի նախաձեռնությամբ բացված այս ցուցահանդեսում ներկայացված են նաեւ, օրինակ, Վլադիմիր Աբրոյանի այն երկու նկարները, որոնք արժանացել են միջազգային մրցանակների եւ զետեղված են միջազգային կայքերում:

– Այս ցուցահանդեսն անչափ կարեւոր է մեզ համար, ասաց մասնակիցներից Սուքիաս Թորոսյանը (Toto),- սակայն կուզենայի, որ ցուցադրվեին նաեւ մեր գործընկերներ Ցոլակ Դանիելյանի եւ Սամվել Աբգարյանի (Ա. Բ. Գ.) նկարները, որովհետեւ այսպիսի առիթ առաջին անգամ է մեզ ընձեռվել:

– Այս ցուցահանդեսի ժամանակ ես առաջին անգամ մոտիկից ծանոթացա իմ գործընկերներից Ագնեսային եւ Արզոյին, թեեւ նրանց աշխատանքներին վաղուց էի ծանոթ, ասաց Դավիթը (Դավիթ Դազանջյան): Կարծում եմ, որ այսպիսի ցուցահանդեսները եւ այսպիսի հանդիպումները շատ բան են տալիս ստեղծագործողին:

Ցուցահանդեսի կայացման փաստն ինքնին բարձր է գնահատում հայ երգիծանկարչության նահապետներից մեկը՝ Գեորգի Յարալյանը, որը սիրով է խոսում իր երիտասարդ գործընկերների աշխատանքների մասին: Ինքը՝ Գեորգի Յարալյանը Հայաստանում վերջին անգամ ցուցադրվել է 1996 թվականին (ընդամենը 2 նկարով), իսկ արտասահմանում (Սիրիա)՝ 1993-ին:

– Ես իսկապես ուրախ եմ այս ցուցահանդեսի համար, ասաց Գեորգի Յարալյանը: Նկարչի համար ամեն մի ցուցադրություն իսկապես տոն է: Իսկ այս ցուցահանդեսը կրկնակի տոն է ինձ համար, որովհետեւ կազմակերպվել է **«Ազգ»** թերթի ջանքերով եւ նախաձեռնությամբ, թերթ, որի խմբագրատանն այսօր աշխատում եմ:

Ամենատարբեր թեմաներ են ներկայացված 35 նկարներում: Սակայն աչքի է զարնում այն, որ պրոֆեսիոնալ բարձր մակարդակով արված գործերը նաեւ շատ սուր հարցադրումներ ունեն: Շատ հետաքրքրական, խաղամական սուր երգիծանքի դրսեւորումներով հարուստ գործեր են ներկայացրել Աբրոյանը եւ Նիկոն, իսկ Արզոն, իր ոճին հավատարիմ, հրամցրել էր խաղամական դեմքդիմանկարներ հատակին անհրաժեշտ ատրիբուտներով: Ցուցահանդեսին վերջին պահին ընդառաջել էր նաեւ Դավիթը՝ «սեւ» կամ «մռայլ» երգիծանքի իր նմուշներով: Հրաշալի տպավորություն էին թողնում բոլորովին երիտասարդ, «նկարչագեղ» արտահայտվող Ագնեսայի ստեղծագործությունները: Սա վկայում է, որ վարպետ երգիծանկարիչներն արդեն արժանի հերթափոխ ունեն, որին անհրաժեշտ է ասպարեզ դուրս բերել: Եվ արդեն ողջ ցուցահանդեսը վկայում է այն մասին, որ հանիրավի սվերում մնացած ժուռնալիստիկայի այս ոլորտը կարող է շատ կարեւոր հարցեր առաջ քաշել, եթե անգամ այս հարցերին պատասխանողները դիտեն այդ գործերը՝ առանց հետեւություններ անելու: Իսկ հետեւություններ անելու շատ բան կա: Հեքիաթի մանկան նման նկարիչները բացակայել են, եւ նրանց ասածը իրականության շեշտված արտացոլումն է: Ասողին լսող կլինի: Ուզում ենք հավատալ, որ այս անգամ կլինի:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Դարի լուսանկարիչը

72-ամյա Արա Գուլերին Թուրքիայում շնորհվել է «Դարի լուսանկարիչ» տիտղոսը: Այդպես վճռել են թուրքական լուսանկարչական խոշորագույն ամսագրերի ընթերցողները: Հայ արվեստագետի սեւ ու սպիտակ լուսանկարները արտացոլում են ժամանակակից խաղաղային կյանքը, իսկ մամուլի կողմից արվեստի վարպետի բարձրագույն կոչմանը Գուլերը արժանացել է ասպարեզում նոր տեխնոլոգիաների ներդրման եւ Թուրքիայում, ըստ թուրքական «Ֆոտոգրաֆի» ամսագրի խմբագրի, լուսանկարչությունը որպես արվեստ ներկայացնելու համար: Գուլերի լուսանկարներն օգտագործված են «Էնցիկլոպեդիա Բրիտանիկայում», նրա աշխատանքները տպագրվել են «Յուրիեթ», «Դեր Սպեգել» եւ «Փարի մաչ», «Լայֆ» եւ «Թայմ» պարբերականների էջերում: *AIM*

ԹԱՏՐՈՆ

Նոր սկզբի ակնկալիքով

Մալյանի թատրոնն էլ մյուս թատրոնների նման վերջին տասը տարիների ընթացքում, կարելի է ասել, պարապուրդի էր մատնված: Դերասանները, սովորական մահկանացուներ, յուրաքանչյուրն իր հոգսով, ընտանեկան ու ապրուստ հայթայթելու խնդիրներով տարվել եւ թատրոնն ակամայից հեռին պլան են մղել: Սակայն չեն մոռացել թատրոնը: Մալյանի ոգին, որ դեռեւս «շրջում է» թատրոնում, այդպես էլ թույլ չի տվել նրանց ցրվել մեկընդմիշտ: Եվ մինչեւ օրս դերասանական հիմնական կորիզը պահպանվել է: Ճիշտ է, նրանք թատրոնը մեռած չեն համարում, քանի որ Հենրիկ Մալյանի մահից հետո ինչ-որ չափով աշխատել են: Վերականգնել են իրենց ղեկավարի որոշ բեմադրություններ՝ «Մուշիի ինքնակենսագրությունը», Թումանյանի «Հեքիաթները», նույնիսկ բեմադրել են ներկայացումներ («Ընկեր Փանջունի», «Կարոտ», «Խաղաղ հանգրվանը»), նաեւ մի ալմանախ՝ «13 սեր»: Ավելի շատ եղել են դրսում՝ հյուրախաղերի, քան Հայաստանում, մասնակցել են միջազգային փառատոնների եգիպտոսում, Գերմանիայում, եղել են Բուլղարիայում, Ֆրանսիայում, Սիրիայում: Սակայն այդ ամենը թատրոնի պահանջկոտ կոլեկտիվն աշխատել չի համարում, քանի որ ձգտում է ավելիին: Ուզում է նոր թափով եւ ամբողջովին վերականգնել Մալյանի ոգին թատրոնում: Իսկ այդ ամենի համար այս տարիներին նրան ոչ միայն սոցիալական դժվար իրավիճակն էր խանգարում: Պարզվում է, որ կոլեկտիվի համար հետաքրքիր չի եղել նաեւ իրեն համապատասխան գեղարվեստական ղեկավար ընտրելը: Բոլոր այն տարբերակները, որ եղել են այս ընթացքում (Մալյանի աշակերտ Գրիգոր Բաբայան, նրա դուստր Նարինե Մալյան, դերասան Աշոտ Ադամյան), կոլեկտիվի անդամներ էին: Եվ քանի որ կոլեկտիվում հավաքվել են հավասարները, նրանցից եւ ոչ մեկը չի կարողացել լիդեր լինել: Ոչ այն պատճառով, որ իրար չեն հասկացել: Պարզապես... եւ մի քանի տարի է, ինչ կոլեկտիվը չուներ գեղարվեստական ղեկավար:

Այսօր թատրոնը կարծես թե գտել է համապատասխան գեղարվեստական ղեկավար: Երկար քննարկումներից հետո ընտրության շրջանակում մնացել է կինոռեժիսոր Ալբերտ Մկրտչյանը: Հրավիրեցին, խոսեցին, իրար հասկացան եւ համաձայնվեցին: Մնում է միայն աշխատել: Կոլեկտիվն էլ միայն նման ակնկալիք եւ հույս ունի նորընտիր գեղարվեստական ղեկավարից:

– Իսկ ինչո՞ւ Ալբերտ Մկրտչյանը, հարցնում եմ դերասաններին:

– Նախ՝ սկսենք նրանից, որ այս տարի երկու հոբելյանական տարելից ունենք. թատրոնի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Հենրիկ Մալյանի 75-ամյակը, որը կնշվի սեպտեմբերին եւ թատրոնի 20-ամյակը: Այդ կապակցությամբ էլ որոշեցինք նոր սկիզբ դնել թատրոնի համար եւ նոր ոգով աշխատել: Իսկ Ալբերտ Մկրտչյանը, կարծում ենք, այն մարդն է, որի հետ կարող ենք աշխատել: Առաջինը՝ նա մոտ է Մալյանի անձին. երկուսն էլ կինոյի ասպարեզից են: Այս պարագայում, ելնելով թատրոնի յուրատեսակությունից, դա կարեւոր է: Չէ որ թատրոնը կոչվում է կինոդերասանի (եւ գործում է «Հայֆիլմ» կինոստուդիային կից) եւ այստեղ հիմնականում աշխատում են կինոյի դերասաններ: Բացի այդ, նա հեղինակություն ունի եւ կոլեկտիվն էլ հավատում է նրան՝ որպես ղեկավարի: Սա էլ պակաս կարեւոր հանգամանք չէ, քանի որ առանց դրա համատեղ աշխատանք չի ստացվի:

Մի պատճառ էլ կա. ստեղծագործական բուռն աշխատանքից բացի հեղինակավոր ղեկավարից կոլեկտիվն ակնկալում է նաեւ մի շարք կազմակերպչական հարցերի կարգավորում:

Իսկ քանի դեռ ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանն աշխատում է իր նոր ֆիլմի վրա, եւ թատրոնի հետ միասին չունեն համատեղ մշակված ծրագիր, թատրոնի կոլեկտիվն էլ, նրան սպասելով, ձեռքերը ծալած չի նստել: Վերականգնում են Մալյանի եւս մեկ ներկայացում «Դեկամերոնը», որը Թումանյանի «Հեքիաթների» հետ միասին աշնանը կմեկնի Ֆրանսիա՝ հյուրախաղերի: Բացի այդ, շուտով ավարտին կհասցվի ամերիկահայ դրամատուրգ, արձակագիր եւ խաղամական գործիչ Խորեն Արամունի «Երբուդարձի տմս դրախտի համար» պիեսի բեմադրությունը: Իսկ սեպտեմբերից, հուրախություն հանդիսատեսի, կսկսվի ներկայացումների շրջանը:

Թատրոնը, թեեւ մրցանակակիր չէ, այնուամենայնիվ՝ սիրված է ժողովրդի կողմից, ինչը, կոլեկտիվի կարծիքով, ամենամեծ մրցանակն է: Չունի նաեւ «բարեկամներ», այսինքն՝ ֆինանսավորողներ: Իսկ պետական օժանդակության մասին խոսք անգամ չի կարող լինել: Այնտեղ այսօր ընդամենը 15 աշխատող կա: Սակայն, կոլեկտիվը հույս ունի, որ աշխատանքներն սկսելու հետ նրանց թիվը կավելանա: Ներկայացումներում հաճախ են ընդգրկվում նաեւ թատրոնին կից գործող ստեղծագործական ստուդիայի սաները: Մնում է միայն սկսել աշխատանքները, իսկ թատրոնին՝ մաղթել բեղմնավոր սկիզբ եւ հաջող ընթացք:

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՈԼԻՎՈՒԴ

Ամենաածիծաղելի ֆիլմերը

Ֆիլմարտադրության ամերիկյան ինստիտուտի վերջերս հրատարակած 100 ամենաածիծաղելի ամերիկյան ֆիլմերի ցուցակում առաջին տեղը հատկացվել է «Տաքում միայն աղջիկներ են», Բիլիս Ուայլդերի 1959-ին նկարահանած դասական ֆիլմին՝ Թոնի Կերտիսի, Ջեկ Լեմոնի եւ Մերիլին Մոնրոյի մասնակցությամբ: Երկրորդ տեղում է Սիդնի Պոլակի «Թուրսին»՝ անզուգական Դաստին Հոֆմանի մասնակցությամբ: Առաջին տասնյակի հաջորդ ութ ֆիլմերն են Սթենլի Կուբրիկի «Dr. Strangelove», Վուդի Ալենի «Annie Hall», Մարքս եղբայրների «Duck Soup», Մել Բրուքսի «Blazing Saddles», Ռոբերտ Ալտմանի «MASH», Ֆրենկ Կապրայի «It Happened One Night», Մայք Նիկոլսի «The Graduate» եւ Ջիմ Աբրահամսի, Դեյվիդ ու Ջերի Զուկերների «Air plane» ֆիլմերը: Մեր հանդիսատեսին ծանոթ «Վանդա անունով ձկնիկը» դասվել է 21-րդ տեղը, իսկ Չաքլինի «Ոսկու տենը»՝ 25-րդը:

Լոս Անջելեսից «Ասոշիեյթեդ պրեսի» լրատվության հիման վրա «Սայփրս Ուիքլիի» վերոհիշյալ տեղեկությունը նաեւ հավելում է, որ ֆիլմերի ընտրություններին մասնակցել են դերասաններ, ռեժիսորներ, քննադատներ, ստուդիաների գործադիր անդամներ եւ ֆիլմարտադրությանն առնչվող մասնագետներ: Նրանց ներկայացվել է ինստիտուտի պատրաստած 500 ֆիլմերից բաղկացած մի ցուցակ: Ըստ թերթի, երրորդ անգամ է, որ ֆիլմարտադրության ամերիկյան ինստիտուտն անցկացնում է նման տարեկան հարցախույզ: Երկու տարի առաջ՝ «Լավագույն ամերիկյան ֆիլմերը» ցուցակում «Քաղաքացի Քեյնը» գրավել է առաջին տեղը: Իսկ անցյալ տարվա «էկրանի 50 լեգենդար դերասանները» ցուցակում Համֆրի Բոգարտն ու Քեթրին Հեփբյորնը զբաղեցրել են առաջին տեղը:

Տ. Օ.

ԱԶԳ

Մարզական

ՆԱՐԴԻ

Հայ մարզիկների խոշոր հաջողությունը

Հայաստանի նարդիստները վերջին տարիներին միշտ էլ մրցանակներով են վերադառնում ամենաբարձր մակարդակի մրցումներից: Սակայն առաջին անգամ նրանք եւ թիմային, եւ անհատական հաշվարկում հաղթող դարձան ամենահեղինակավոր մրցումներում:

... Երկու անգամ՝ 1992 եւ 1996 թթ., Վենետիկում նարդու համաշխարհային օլիմպիադաներ են անցկացվել: Ընդ որում, օլիմպիադաներ անցկացնելու մենաշնորհը երկարաժամկետ պայմանագրով էր տրվել իտալական այս գեղեցիկ քաղաքին: Այս տարի էլ այնտեղ պետք է օլիմպիադա տեղի ունենար, բայց ավաղ... Մարզածեւի միջազգային ֆեդերացիայի եւ կազմակերպիչների ֆինանսական տարաձայնությունների պատճառով օլիմպիադան, որպես այդպիսին, չկայացավ: Աշխարհի տարբեր երկրներից Վենետիկ ժամանած նարդիստները փոխարենը հանդես եկան միջազգային մրցաշարում: Այսպիսով, մրցումների «կարգավիճակը» փոխվեց, թեեւ մասնակիցները նույնն էին: Եվ Հայաստանի մարզիկները, որոնք առաջինն էին աշխարհի ուժեղագույն նարդիստների պայքարում, փոխանակ օլիմպիական չեմպիոններ հռչակվելու, «պարզապես» միջազգային մրցաշարի հաղթող դարձան:

Թիմային մրցումներում հանդես եկան 32 երկրների նարդիստներ: Հայաստանի հավաքականը, որի կազմում ընդգրկված էին Արթուր Մուրադյանը, Ավետիս Ոսսոնյանը եւ Համբարձում Աթոյանը, հերթով պարտության մատնեց Դանիայի, Գերմանիա-2-ի, Հունաստանի, Իտալիայի, իսկ եզրափակիչում՝ Վենետիկի նարդիստներին եւ նվաճեց չեմպիոնի կոչումը:

Անհատական մրցումների բարձրագույն խմբում, որտեղ հանդես էին գալիս 105 մարզիկներ, չեմպիոն դարձավ մեր Արթուր Մուրադյանը: Եզրափակիչ խաղում նա 21-15 հաշվով պարտության մատնեց Ֆրանսիացի Միշել Սերերոյին:

Միջին խմբում ունեցանք երկու մրցանակակիր. Լեւոն Քամալյանը գրավեց 3-րդ տեղը, իսկ Կոլյա Մուսոյանը այսպես կոչված «վերջին շանսում» 1-ինը:

Վենետիկից բոլորը տեղափոխվեցին Մոնտե Կառլո՝ մասնակցելու աշխարհի հերթական՝ 25-րդ առաջնությանը: Այստեղ երեք մրցաշարերում հանդես եկան ավելի քան 460 նարդիստներ:

Մեր մարզիկներից երեքը խաղացին բարձրագույն խմբում, սակայն մրցանակային տեղեր գրավել ոչ մեկին չհաջողվեց: Առավել հաջող էր Համբարձում Աթոյանի մրցելույթը. նա մեկ պարտությամբ մտավ 1/16 եզրափակիչ փուլ:

Միջին մրցաշարում Լեւոն Քամալյանը «շանսում» երկրորդ տեղը գրավեց:

Մոնտե Կառլոյում խոշոր իրադարձություն տեղի ունեցավ. պատմության մեջ առաջին անգամ նարդու աշխարհի չեմպիոն դարձավ գեղեցիկ սեռի ներկայացուցիչը: Ամերիկուհի Քաթի Շալամանդրան իրար ետեւից հաղթանակներ տարավ ուժեղ մրցակիցների նկատմամբ, իսկ եզրափակիչում 25-21 հաշվով պարտության մատնեց նաեւ դանիացի Քրիս Հոլմին ու նվաճեց գլխավոր մրցանակը: Հետաքրքիր է, որ միջին մրցաշարում էլ հաղթողը կին էր՝ դանիացի Տանյա Լեւիսը: Դե ինչ՝ այստե՞ղ էլ էմանսիպացիա:

Մեր նարդիստների մրցաշրջանի վերջին կետը Ֆրանսիական Նիս քաղաքն էր: այստեղ անցկացված միջազգային մրցաշարում հաղթող դարձավ բուլղարացի Նոսկոն: Մեր հնգյակից առավել հաջող խաղաց Քամալյանը. «շանսում» նա առաջինն էր:

ՇԱԽՄԱՏ

Կմասնակցեն գերմրցաշարին

Հայաստանի երկու առաջատար շախմատիստներ՝ գրոսմայստերներ Սմբատ Լպուտյանն ու Արտաշես Մինասյանը, մեկնել են Իտալիա՝ մասնակցելու Մոնտեկատինի քաղաքում անցկացվող գերմրցաշարին:

Մեր երկրից բացի, մրցաշարում հանդես կգան այնպիսի հանրահայտ շախմատիստներ, ինչպիսիք են Ալեքսեյ Շիրովը (Իսպանիա), Վասիլի Իվանչուկը (Ուկրաինա), Եվգենի Բարեեւը, Սերգեյ Ռուբլեւսկին (երկուսն էլ՝ Ռուսաստան), Երուն Պիկեսը (Հոլանդիա), Զուրաբ Ազմայպարաշվիլին (Վրաստան): Մրցաշարն ըստ ՖԻԴԵ-ի դասակարգման սանդղակի բավականին բարձր՝ 18-րդ կարգ ունի:

Ինչ խոսք, Մոնտեկատինի մրցաշարը շատ հեղինակավոր կազմ է հավաքել, բայց հուսանք, որ Լպուտյանն ու Մինասյանը հաջող հանդես կգան ուժեղ շախմատիստների հետ պայքարում:

ԹԵՆԻՍ

Երեք մրցաշար

Վերջին օրերին մի շարք մրցաշարեր ավարտվեցին:

Ամստերդամի (Հոլանդիա) մրցաշարի եզրափակիչում հանդիպեցին շվեդ Մագնուս Գուստավսոնը եւ հոլանդացի Ռեյմոն Սլյույտերը: Հաղթելով 6-7, 6-3, 7-6, 6-1 հաշվով՝ գլխավոր մրցանակը նվաճեց Գուստավսոնը:

Խորվաթիայի Ումագ քաղաքում անցկացված մրցաշարում հաղթողի կոչումը վիճարկեցին Մարսելո Ռիոսը (Չիլի) եւ Մարիանո Պուերտան (Արգենտինա): Համառ պայքարում Ռիոսը 7-6, 4-6, 6-3 հաշվով պարտության մատնեց մրցակցին եւ արժանացավ առաջին մրցանակին:

Հոկկե-Հեյսթում (Բելգիա) մրցեցին թենիսիստուհիները: Մի շարք ճանաչված մարզուհիներ, պարտություններ կրելով, չհասան եզրափակիչ: Իսկ վճռական խաղում հաղթողի կոչման համար պայքարի մեջ մտան Աննա Սմաշնովան (Իսրայել) եւ Դոմինիկ վան Ռուստը (Բելգիա): Ավելի բարձր էին գնահատվում վերջինիս հնարավորությունները, բայց Սմաշնովան կարողացավ առավելության հասնել ավելի փորձառու մրցակցի նկատմամբ՝ 6-2, 7-5:

ՖՈՒՏԲՈԼԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լուիս Ֆիգուն տեղափոխվեց Մադրիդի «Ռեալ»

Ավելի քան 20 օր շարունակ քննարկվում էր այն հարցը, թե Պորտուգալիայի հավաքականի եւ իսպանական «Բարսելոնի» առաջատար խաղացող Լուիս Ֆիգուն կտեղափոխվի՞ արդյոք իսպանական մեկ այլ ակումբ՝ Մադրիդի «Ռեալ»: Երբ սկզբում նախատեսվող գործարքի մասին հայտարարվեց, ֆուտբոլիստը հերքեց լուրերը եւ ասաց, որ ինքը հավատարիմ կմնա «Բարսելոնին»: Եվ այդպես՝ համարյա երեք շաբաթ: Այդուհանդերձ, «դարի գործարքը» կայացավ: Եկող մրցաշրջանում Ֆիգուն հանդես կգա «Ռեալում»: «Արտայական» ակումբը 27-ամյա պորտուգալացու համար կատալոնցիներին վճարել է 57 մլն դոլար, ինչը ռեկորդային է: Ֆիգուն տարեկան կստանա 4 մլն դոլար (չհաշված պարգեւավճարները): Պայմանագիրը կնքվել է 4 տարով:

Ի դեպ, փոխվել են Ֆիգուի նախկին եւ նոր ակումբների ղեկավարները: «Բարսելոնի» նախագահ է ընտրվել Ժոան Գասպարտը, «Ռեալի»՝ Ֆլորենտինո Պերեսը:

Դի Ստեֆանոն՝ ակումբի պատվավոր նախագահ

«Ռեալում» նաեւ պատվավոր նախագահի պաշտոն է բացվել: Այն զբաղեցրել է հանրահայտ Ալֆրեդո դի Ստեֆանոն: Նա «Ռեալի» կազմում 11 մրցաշրջան է անցկացրել՝ սկսած 1953 թ.-ից: Այդ ընթացքում մադրիդցիները հոյակապ հաջողությունների են հասել՝ 5 անգամ նվաճելով Չեմպիոնների գավաթը եւ 11 անգամ՝ Իսպանիայի չեմպիոնի կոչումը: 64-ամյա դի Ստեֆանոն, զբաղեցնելով պաշտոնը, հայտարարել է, որ ինքը շատ երջանիկ է եւ երախտապարտ՝ ակումբի ղեկավարությանը:

Պեսկովիչը ժամանակավո՞ր է

Հարավսլավիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնը, որը թափուր էր մնացել Վոյադին Բոշկովի հեռանալուց հետո, զբաղեցրել է Իլիա Պեսկովիչը: Պեսկովիչը որպես ֆուտբոլիստ երկար տարիներ խաղացել է Բելգրադի ՕՖԿ թիմում, 44 անգամ հանդես է եկել Հարավսլավիայի հավաքականում: Մարզել է ՕՖԿ-ն, եղել է երկրի հավաքականի գլխավոր մարզչի օգնականը: Որպես մարզիչ աշխատել է նաեւ Ճապոնիայում, Շվեյցարիայում, Հունաստանում: Հայտարարվել էր, որ Պեսկովիչի հետ պայմանագիր կնքվել է մինչեւ 2002 թ. աշխարհի առաջնությունը, այսինքն՝ 2 տարով, բայց...

Հարավսլավիայի հավաքականի ավագ Դրագան Ստոյկովիչը, որը խաղում է ճապոնական ակումբներից մեկում, ասել է, որ պատրաստվում է եկող տարի ավարտել ֆուտբոլիստի կարիերան ու անմիջապես գլխավորել երկրի հավաքականը որպես մարզիչ: Գուցե դա պարզապես նրա ցանկությո՞ւնն է:

Փորձեք լուծել

№ 2



Մատ 2 քայլից

Նախորդ համարի 2 քայլանի խնդրի լուծումն է՝ 1. Թh7!:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Կարինյան: 2. Ինդոս: 3. Քեչեկ: 4. Կերկեգոր: 6. Կալման: 7. Օլովա: 10. Օֆելյա: 11. Մարաբա: 12. Վարդակ: 16. Միրանդոլա: 17. Տիգրանյան: 19. «Լունախոդ»: 20. Արմավիր: 25. Երուխան: 26. Սորբոն: 27. Բրիկես: 29. Մենդելեեւ: 31. Արտագերս: 32. Սորգան: 33. «Իկարուս»: 37. Խորոս: 38. Աբեղա:

Հորիզոնական

5. Վարդանիկ: 7. Օրենսգեր: 8. Ոսկին: 9. Սոլիեր: 13. Բյուֆե: 14. Գալյամովա: 15. Մանգո: 18. Նալչիկ: 21. Վինձոր: 22. Սուրբարա: 23. Անապաս: 24. Մալյան: 28. Կորովին: 29. Մաուգլի: 30. Հարիսա: 34. Անբան: 35. Դոստոեւսկի: 36. Նեսսո: 39. Խորգոմ: 40. Մարաբու: 41. Հեփբյորն: 42. Սաղավարս:



Ուղղահայաց

1. Նկարակալի գերմանական անվանումը: 2. Վրթ. Փափազյանի դրաման: 3. Իրանի շահ: 4. Ռուսական բանակի հայազգի զորավար, գեներալ: 7. Սմրակման դեսալ: 9. Բնակավայր Լեռնային Ղարաբաղում, որտեղ գտնվում է 2005 տարեկան հրաշք ծառը: 10. Նկարիչ, որը ծնվել է Հոլանդիայի Հալեմ քաղաքում: 12. Հեգնանք, սպանիչ ծաղր: 13. Շրթնածաղկավորների ընտանիքի բույս: 18. Բրազիլական կինոսերիալի հերոսուհի, որն ապրում էր ֆազենդայում: 19. Քաղաք Իտալիայում, որտեղ գտնվում է Սուրբ Մարկուսի հրապարակը: 21. Հայ երգահան: 24. Եվ ծաղիկ, եւ համեմունք: 25. Բարձրագույն նոպատակ, որին ձգտում են մարդիկ:

Հորիզոնական

5. Այս եկեղեցին կառուցվել է 1694 թ. Նահապետ կաթողիկոսի օրոք, Աղամալ Շոթոռեցի իշխանի միջոցներով: 6. Հայ նկարիչ: 8. «Կուլտուրան լեռներին» կտավի հեղինակը: 11. Երանելի վայր: 14. Հոլիվուդի դերասանուհի, ասող: 15. Ձարդաքար: 16. «Ձախար Բերկուս» պատմական վիպակի հեղինակը: 17. Մսից պատրաստված ուտելիքի ընդհանուր անվանումը: 20. Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակի առիթով ստեղծված հոբելյանական մեդալի հեղինակը: 22. Գետ Իրանի եւ Աֆղանստանի միջեւ: 23. Խորհրդային վիրաբույժ: 26. «Ինքնադիմանկար կնոջ՝ Սասկիայի հետ» նկարի հեղինակը: 27. Գիշատիչ միջատ՝ ճպուռի տեսակ: 28. «Եվ ...ը Աբու Լալայի...»:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Քեմփ Դեյիդի գագաթաժողովը դեմ առավ Հին Երուսաղեմի պատին

Առաջադրյուն ավարտվեցին Քեմփ Դեյիդի երկշաբաթյա եռանդուն ու խրթին բանակցությունները՝ պաղեստինցիների եւ իսրայելցիների միջեւ: Այդ մասին հուլիսի 25-ին հայտարարեց գագաթաժողովի հովանավոր, ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը, որը, սակայն, անուղղակիորեն ձախողման պատճառը վերագրեց պաղեստինյան առաջնորդ Յասեր Արաֆաթին: Ըստ նրա, վերջինս Երուսաղեմի հիմնախնդրում համաձայնությանբար չարձագանքեց Իսրայելի վարչապետ Եհուդ Բարաքի «շատ խաբ» քայլերին: Ի դեպ, դեռ «Ազգի» հուլիսի 7-ի համարում հավանական էինք համարել նման կողմնակալ սցենարը եւ եզրակացությունը՝ Ասադ-Քլինթոն մարտին կայացած ժնեւյան գագաթաժողովի տարբերակով: Այսինքն, ըստ Վաշինգտոնի, եթե արաբական կողմը զիջումներ չի կատարում հանուն Թել Ավիվի, ապա նրա վրա է բաղդվում անհաջողության մեղադրանքը:

Վերադառնալով Բարաքի «շատ խաբ» քայլերին, նշենք, որ նա ընդամենը վերջին պահերին Արաֆաթին առաջարկել է դյուրացնել պաղեստինցիների երթեւեկությունը դեպի Հին Երուսաղեմ՝ իսլամա-քրիստոնեական սրբավայրեր այցելելու համար: Ընդ որում, Բարաքը կտրականապես մերժել է պաղեստինցիների լիակատար գերիշխանությանը հանձնել արեւելյան հատվածները, այդ թվում՝ Հին Երուսաղեմը, որոնք նույնպես բռնագրավվել են 1967 թ. պատերազմի ընթացքում: Ուստիեւ, համաձայն ՄԱԿ-ի ԱԽ-ի թիվ 242 եւ 338 որոշումների, այդ հատվածները նույնքան զրավյալ հողեր են, որքան Հորդանան գետի արեւմտյան ափը եւ Գազայի հատվածը: Իմիջիայլոց, Վաշինգտոնը դե յուրե չի ժխտում այս փաստը, սակայն դե ֆակտո գործում է հակառակ ուղղությամբ՝ ճնշումների միջոցով արաբներին պարտադրել իսրայելական տեսակետները:

Քեմփդեյիդյան գագաթաժողովի ձախողման հնարավոր «անհեւանկալելի հետեւանքներից» խուսափելու համար 3 ղեկավարները՝ Քլինթոնը, Արաֆաթն ու Բարաքը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, ուր 2 կողմերը խոստանում են շարունակել ջանքերը՝ հնարավոր ամենակարճ ժամանակում համաձայնության հասնել վերջնական կարգավիճակին վերաբերող բդթածրարների շուրջ: Իսկ այդ համաձայնության գալու համար հետագա բանակցությունները դարձյալ պետք է հիմնվեն թիվ 242 եւ 338 որոշումների վրա: Հայտարարության կարեւոր կետերից է, որ կողմերը պետք է զերծ մնան ճնշումներից, ահաբեկումից եւ բռնության դիմելու սպառնալիքներից: Այս կետը անուղղակիորեն վերաբերում է Թել Ավիվին, որը բազմիցս սպառնացել է տանկերով եւ օդուժով ճնշել պաղեստինյան «միակողմանի» քայլերը, նկատի ունենալով, իհարկե, պետության հռչակումը: Ահա թե ինչու հաջորդ կետով կարեւորվում է միակողմ քայլերի շրջանցումը, որոնք «կարող են ազդել բանակցությունների արդյունքի վրա»: Հայտարարության վերջում նրանք շեշտել են, որ ԱՄՆ-ը մնալու է գլխավոր գործընկերը՝ խաղաղության ձգտելու գործում:

Մի դիտորդի դիպուկ բնորոշմամբ՝ «Քեմփ Դեյիդը դեմ առավ Հին Երուսաղեմի պատին», քանզի հենց Բարաքի վերոհիշյալ առաջարկից եւ պնդումից հետո Արաֆաթը տեղեկացրեց Քլինթոնին, որ անիմաստ է երկխոսության շարունակումը, եւ այդպես էլ եղավ:

Այս ծիրում Իրանի նախագահ Մոհամադ Խաթամին, որի երկիրն այժմ Իսլամական համաժողով կազմակերպության նախագահողն է, հանդես է եկել հայտարարությամբ, ընդգծելով, որ Երուսաղեմի ճակատագիրը վերաբերում է ոչ միայն պաղեստինցիներին, այլեւ ողջ իսլամական աշխարհին: Իրենց հերթին, Երուսաղեմի հայկական եւ մյուս եկեղեցիների հոգեւոր առաջնորդներն օրերս իրենց աջակցությունն են հայտնել պաղեստինցի ղեկավարներին՝ սուրբ քաղաքի հիմնախնդիրը կարգավորելու հարցում:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Շվեյցարիան փոխհատուցում կտա Միխայլովին

...Իսկ Բերեզովսկու հայցը մերժվեց

Ռուսական մաֆիայի ենթադրյալ կնքահայր Սերգեյ Միխայլովն ավելի բախտավոր է, քան օլիգարխ Բորիս Բերեզովսկին: Բանն այն է, որ հուլիսի 24-ին Շվեյցարիայի դաշնային դատարանը մերժեց իր բանկային հաշիվներն ապասառեցնելու Բերեզովսկու խնդրանքը, մինչդեռ Միխայլովի գործը վերանայելուց հետո որոշեց նրան 800 հազար շվեյցարական ֆրանկ (517 հազար եվրո) փոխհատուցում տալ դատից առաջ 778 օր շվեյցարական բանտում անցկացրած լինելու համար: 1998 թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած դատավարությունն արդարացրել էր Սերգեյ Միխայլովին: Իսկ ավելի վաղ՝ 1996 թ. հոկտեմբերին Ժնեւի օդանավակայանում նրա ծերբակալվելուց հետո, զանգվածային լրատվամիջոցներում այն միտքն էր արտահայտվում, թե Միխայլովը, հավանաբար, ռուսական մաֆիայի կնքահայրն է: Նրան ամբաստանում էին բռնաբարության, կավատության եւ փողերի լվացման մեջ:

Սկզբնական շրջանում շվեյցարական դատարանը Միխայլովին ներկայացրել էր փողերի լվացման մեղադրանք, ապա կասկածել էին, թե մերձմոսկովյան Սուլնցեւոյի հանցախմբերի պարագլուխն է: Շվեյցարացիները Միխայլովի գործի առնչությամբ օգնություն էին խնդրել ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյից եւ այլ գաղտնի ծառայություններից: Բայց Ռուսաստանի հատուկ ծառայություններն առանձնակի փութաջանություն չէին դրսեւորել: Հանցակազմի բացակայության պատճառով Միխայլովն ի վերջո արդարացվել էր:

42-ամյա Միխայլովն այժմ ապրում է Ռուսաստանում: Ժնեւյան դատարանը փոխհատուցման վճիռ է կայացրել նրա փաստաբանի պահանջով: «Սոնդ» թերթի վկայությամբ, փոխհատուցման գումարն աննախադեպ մեծ է Շվեյցարիայի դաշնային դատարանի պատմության մեջ:

Միեւնույն ժամանակ դատարանը մերժեց շվեյցարական բանկերում իր հաշիվներն ապասառեցնելու Բորիս Բերեզովսկու հայցադիմումը: Բերեզովսկին ամբաստանվում է «Սերոֆլոտի» գումարների յուրացման մեջ: Սի ֆանի օր առաջ Շվեյցարիայի դաշնային դատարանն արդեն մերժել էր Բերեզովսկու հիմնած «Ֆորուս» եւ «Անդավա» ընկերությունների համանման հայցերը: Ռուսաստանի արդարադատության մարմինները կասկածում են, թե այդ ֆիրմաները միջնորդի դեր են խաղացել «Սերոֆլոտի» գործարքներից ստացված 600 մլն դոլարի լվացման մեջ:

Պ. Ք.

Հայաստանի ամերիկյան համալսարանի

հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր

ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար

Ռոլանդ Շառոյանը

ներկայացնում է

«Ազգային գաղափարախոսություն եւ մշակույթ»

Ուրբաթ, հուլիսի 28-ին, ժամը 18:00-ին, Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում

Դասախոսությունը կընթանա հայերենով՝ անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

AED

Academy for Educational Development

JOB OPENING
IMMEDIATE FILLINGS

The Academy for Educational Development (AED) Yerevan office announces the job openings for the following positions:

1. Program Assistant for Health/Medical programs
2. Program Assistant for Economic and Business programs
3. Manager of Information Systems
4. Accountant and Financial Assistant
5. Receptionist
6. Driver

AED has been in Armenia since 1994, implementing USAID-funded short- and long-term training programs in different areas of economic reforms and civil society development.

Qualifications Required:
Master's Degree in Health/Medical for position #1, Master's Degree in Business or Economics for position #2. Education and work experience in the relevant areas for all positions. Strong analytical skills, excellent judgment and good interpersonal skills. Fluency in Armenian, English and Russian for positions #1-5. Strong computer skills for positions #1-4. Personal vehicle in a good shape and condition for position #6.

AED offers a competitive salary and excellent opportunity to work on human resource development for Armenia. To apply, please send cover letter and resume to Ms. Anoush Yedigaryan, Country Director, AED/Armenia by August 4, 2000.

ASHB

ԱՎԵԼԻ ԱՐԱԳ, ԱՎԵԼԻ ՀՈՒՍԱԼԻ, ԱՎԵԼԻ ՄԱՏՉԵԼԻ

Արդշինբանկն առաջարկում է օգտվել միջազգային «Մանիգրամ» ակնթարթային վճարային համակարգի ծառայություններից: «Մանիգրամի» միջոցով ցանկացած երկրից ուղարկված գումարը կգտնի իր հասցեատիրոջը Հայաստանում հաշված ռոպեների ընթացքում:
Ուղարկեք եւ ստացեք «Մանիգրամի» փոխանցումները Արդշինբանկի բոլոր մասնաճյուղերում՝ Հայաստանի ողջ տարածքով մեկ:
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրվում է զանգահարել 56-00-85 հեռախոսահամարով:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ ՄԻՇՏ ՀՈՒՍԱԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ Է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր այն հաշվապահներին, որոնց ձեռնարկություններն անցել են հաշվապահական հաշվառման փոխարկման փուլը՝
Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիան /ՀՀԱԱ/ կազմակերպում է անվճար դասընթաց
«Կառավարչական հաշվապահություն» թեմայով:
Դասընթացն ամբողջովին նվիրված է ինֆլյացիայի ձեւավորման հաշվարկներին:
Դասախոսությունները կկարդա Մեծ Բրիտանիայից հրավիրված հաշվապահության պրոֆեսոր **Դանիելն Վիլիամսոնը:**

Դասընթացը սկսվում է օգոստոսի 1-ից, տեւողությունը 16 ժամ:
Տեղեկությունների համար զանգահարել 54-16-65, 24-94-67, 24-93-19
Հասցեն Կ. Ուլնեցու 31, 5-րդ հարկ
էլ. փոստ aaaa@arminco.com

P.S. ՀՀԱԱ-ի անդամներին տրվում է նախապատվություն:

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒԱԳԻՐ

27 հուլիս

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Չեկինյա Գոնզագա»
10.10 Մանրամասներ
10.20 Մամուլի կրոակ
10.30 Բոհեմ
11.05 Հազարամյա պարիսպները
11.30 Գ/Ֆ «Հարված տիեզերից»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 «Արեւիկ»
18.00 Հեռուստասերիալ «Չեկինյա Գոնզագա»
19.00 Հենց այնպես
19.10 Փաստագրական կինոնկար «Մեր դարը»
20.00 Բժիշկ եւ հիվանդություն
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակասալոգ
21.50 Պրեմիերա
22.00 «Բարի ակնթարթ»
23.10 Հիթ շերթ
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ծեծընթաց
01.00 Ռուբիկոն+

ՊՐՈՄԵԹԵՎՍ

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.30 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ: սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Կոբրա»
19.00 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
20.00 Լրաբեր
20.35 Ռ. Մավիսակալյանի «Հարցեր» հեղինակային ծրագիրը
21.20 Օրը
22.25 «1-02» լրատու
22.35 «Ջեղնահարկ»
22.50 Գ/Ֆ «Բեռանթացը»
(24.00 Լրաբեր)

19.05 Ջղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Վ/Ֆ «Բնակիչներ»
20.10 Ի դեպ
20.30 Վարսահարդարների մրցույթ
21.10 Հրադարակ
22.05 Գ/Ֆ «Փեսացուն»
0.35 Ակնթարթ
0.40 Գ/Ֆ «Մահացու ցուրտ»
(Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.20 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 «100 տոկոս» ծրագիրը
17.10 ...Մինչեւ 16 եւ բարձր
17.45 Համով պատմություններ
17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.00 Նորություններ
19.30 Դիմակներ-շոու
20.00 Գ/Ֆ «Օրինական ամուսնություն» (դերերում Ն. Բելոխվոստիկովա. Ի. Կոստ. լեւսկի. 1985 թ.)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.45 Սերիալ «Հարձակման անկյունը»
23.40 Գործընթաց
00.30 Նորություններ
00.45 Մոսկովյան կինոփառատոնի օրագիրը
00.55 Քաղաքակրթություն
01.25 Սերիալ «Նորությունների ծառայություն»

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20, 7.50, 8.40, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
8.30 PTP-ի փոստը
9.20 Հեռուստատեսային ՀՄՍ
10.35 Մուլտսերիալ «Կապիտան Պրոնինի արկածները»
10.45 Մուլտսերիալ «Նոյյան տապան» (ԱՄՆ)
11.10 Գ/Ֆ «Իմ անուրջների արքայադուստրը» (2-րդ սերիա)
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Երկխոսություններ կենդանիների մասին
14.00, 18.00, 21.00 Լուրեր
14.30 «Մայինա ռուչա»
15.00 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.45 Երկու ռոյալ
17.40 Հեռուստատեսային ՀՄՍ
18.35 Սերիալ «Մարգո թագուհին»
20.25 Զվարճալի ծրագիր «Ինչպես ծախսել միլիոնը»
21.45 Սերիալ «Վայրի հրեշակը»
23.35 Սերիալ «Հեռանկարները վառում են գիշակները»
01.20 Պանկրատիոնի աշխարհի առաջնություն
02.55 Հերթապահ բաժանմունք

@rminco Գլոբալ Տեղեկատվական Ցանց — Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1300 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության 26.07.2000 Գինը 100 դրամ